



Հ.Յ.Ղ. ԲՆԻՐՈՒ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BUREAU
LIBRARY

ԴԻՐՈՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1905

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolut. Armenienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse: 43, 7, RAFFINERIE
RÉDACTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Տ Ա Ս Ն Ա Մ Ե Ա Կ Ի Ն

Տաս տարի է գլորւել...

Նգովքի ու սոսկումի մի տասնամեակ՝ որ սիրտ կարա-
տող յուշեր է յարուցանում ամեն հայի մէջ, պատ-
մելով նրան անօրինակ ճակատագրի փորձութիւնները, —
Դանտեսն դժոխքը իր անպատմելի արհաւիրքներով:
Տաճկահայաստանը ծայրէ ծայր արիւնտուեց և ժողո-
վուրդը՝ ջորդւած, հաշմանդամ, լալով ու բառաչելով
ձգւեց նոյն անսիրտ ճակատագրին:

Տաս տարի է գլորւել և որքա՛ն նման են երկու
դրութիւնները — այժմ ու տաս տարի սրանից առաջ...
Միմիայն կովկասեան աղէտները չեն, տարաբախտաբար, որ
ստեղծուեան այդ նմանութիւնը: Այսօր Բոսֆորի վրայ
նոյն չարագուշակ մթնոլորտն է կախւած, ինչ որ 1895
թւի աշնան սկզբներին: Լուրերը ծանր են, խորհրդա-
ւոր, յուզիչ: Արդեօք պիտի վերսկսւի՞ մասսային ոճիր-
ների շարքը. մահափորձից ազատւած ոճրագործը պիտի
ուզենա՞յ արդեօք կատարել Արեան տասնամեայ յօբե-
լեանը՝ նոր, թարմ արեան հեղեղներով...

Ահա խնդիրը, որ առժամապէս թերևս փոքր ինչ
մոռացութեան է տրւած Ռուսահայաստանի տագնապի
պատճառով:

Եթէ սուլթանը մինչև օրս չը կամեցաւ արձագանք
տալ իր կովկասաբնակ հաւատակիցների սխրագործու-
թիւններին և ցարի մարդասպան քաղաքականութեան՝
դա պիտի վերագրել ոչ, իհարկէ, նրա հայանպաստ տրա-
մադրութիւններին կամ քաղաքական հասունութեանը,
այլ պարզապէս, եւրոպական ազդարարութիւններին:

Սակայն վտանգը դրանով չէ վերանում, կասկածները
չեն փարատուում դրանով և թիւրքահայի դողացնող
կոչմանը յարատուում է ամենահաւոր սպասելիքների
հեռանկարով: Ի՞նչ են վկայում Կ. Պոլսից տեղացող
լուրերը, եթէ ոչ այն՝ որ հայ ժողովրդի Փէսաւոր
թշնամիները մշտնջենապէս գործի վրայ են, որ
մարդասպանը, շրջապատւած իր բոլոր քաղաքագէտ
ծառանքով, պետական կարևոր գործերը թողած՝ նոր
դաւադրութիւն է յղանում, կազմակերպուած:

Ահա թէ ինչ է գրում „Frankfurter Zeitung“-ի
կրակե թղթակիցը թիւրքական մայրաքաղաքից.

Հայերի դէմ հալածանքը մեծ ծաւալ է ընդունում:
Հայր ամեն վայրկեան կարող է ձերբակալուել և ոչ մի բողբոջ
այլ ևս չէ օգնում, անգամ երբ փաստերով հաստատուում է
նրա անմեղութիւնը: Թէ ո՛ւր կ'առաջնորդէ ներկայ վիճակը-
ն ոչ դը չէ կարող ասել. միայն որ աւուր աւելի և աւելի պար-
զուում է, որ հայաճանքների ու ձերբակալութիւնների այս
յայտուածն սխտեմբ, որ ամենածանր կերպով վնասում է
Թիւրքիայի ամբողջ սոցիալական-ստատեակական կեանքին՝ դիւ-

րութեամբ կարող է մղել դէպի մի այնպիսի կատարածք,
որի հետ համեմատուած՝ 1896-ի օգոստոսեան օրերը փոք-
րիկ կ'երևան:

Միևնոյն մեթօդը... Պետերբուրգում ու Կ. Պոլսում:
Արևելեան բռնաւորները շարունակում են արեւելեան
տաքտիկով պայքարել յեղափոխութեան դէմ. փոխա-
նակ ուղղակի ըմբոստացող տարրը ոչնչացնել () ձգտելով՝
նրանք բոլոր թափով, բոլոր բարբարոս միջոցներով ար-
շաւում են անմեղ ու անմասն ազգաբնակչութեան դէմ:

Մեթօդը նոյնն է, միջոցները նոյնն են, նպատակը
նոյնն է, — անդամալուծել մի փոքրիկ ժողովուրդ, որը
իր խաղաղ կուլտուրայով փուշ է դարձել բոլոր տիրան-
ների աչքում: Սակայն հարւածները՝ լինեն մտրակի թէ
եթափողանի՝ չեն երբէք հասնում իրենց նպատակին.
Փոքրիկ արիւնտուած, հաշմանդամ զօհը դարձեալ կեն-
դանի է, նա դարձեալ ծառանում է իր պատմական ա-
ռաքելութեան ճանապարհի վրայ: Իր գոյամարտի ա-
հեղ կրկեսում, նա դարձեալ փուշ է, և մեշտ աւելի
ծակող, աւելի ցաւեցնող...

Տխուր յուշերն ու խոհերը չեն միայն, որ պաշա-
րում են մեզ վերջին արիւնաներկ տասնամեակի
վրայ անդրադառնալիս: Միմիայն ճակատագրի դաժա-
նութիւնը չէ, միմիայն հայի մուայլ յուսահատ կացու-
թիւնը չէ, որ արտացոլում է այդ ցաւոտ շրջանի
տեսութիւնից: Հապա այդ ճակատագրի զօհի կորովը...
Հապա այն շնաշխարհիկ տոկունութիւնը՞, որով այդ զօհը
կարողացաւ գլուխ դուրս բերել հսկայական փորձութիւն-
ներից, անգուլ պայքարելով ճակատագրի բռնակալու-
թեան դէմ...

Այդ տոկունութիւնը, կեանքի ու մահուան տասնա-
մեայ կուռում ցոյց տւած այդ հզօր կենսունակութիւնը
նոյնքան անօրինակ է, նոյնքան ապշեցուցիչ, որքան և
կրած փորձութիւնները:

Թո՛ղ դա լինի մեզ բաջալեր՝ ներկայ ծանր րօպէնե-
րում: Թո՛ղ հայ ժողովրդի այդ անսովոր դիմադրական
ուժը ներշնչէ մեզ անասան հաւատ դէպի նրա ապա-
գան: Եւ չ'անիծենք պայքարի սկզբունքը, ըրպէի վաղ-
անցուկ, թէկուզ և ծանր, դժբախտութիւններից մղւած՝
անցուկ, թէկուզ և ծանր, դժբախտութիւններից մղւած՝
փոքրագութեամբ քարեր չը նետենք դէպի այն զւարթ
ու անձնուրաց շարքերը, դէպի մարտնչողների այն կուռ
բանակը, որը ահաւոր տագնապների մէջ ժողովրդական
ինքնապաշտպանութեան պատւար է հանդիսանում, փրը-
կութեան խարխուլ:

Տաս տարւան գուռ անցքերի տրամաբանութիւնը և
արդի հսկայական փոթորիկը Ռուսահայաստանում,
հրահանգում են մեզ փարել ինքնօգնութեան գաղա-
փարին, սեղմել մեր մարտական շարքերը և, հեռու
մնալով դաւաճան համակերպութիւնից, պատնէշ կան-
գնել մեր բազմապիսի թշնամիների հանդէպ, տողորւած

այն անխախտ գիտակցութեամբ՝ որ քաղաքակրթութեան դատը երբեք չպիտի կորսուի, որ հայի աստղը երբեք չպիտի մարտնչեմ երկնակամարի վրայ...

Նսաւը գնում է դէպի իր վերջնական հանգստի կայանը, երբեմն երբեք չլինելու հոգեւոր հասնելով, բայց

միշտ դարձեալ փրկարար հաւասարակշռութիւնը վերականգնելով ու անյողոզող առաջ լողալով: Բոլոր խաւար ուժերը, մի սրբազան դաշն կուած, մոլեգնութեամբ գահավիժուում են նրա դէմ, ձգտելով անդունդ դրել... սպարդիւն:

Հ Ա Յ Ո Ր Դ Ի Ն Ե Ր Ը

է

Կ Ո Վ Կ Ա Ս

Եւ ի՞նչ ոսկեղէն դարագլուխ է այս, և շղթաներու ի՞նչ զայրագիւմ փշրտում. ի՞նչ ընդհարում՝ ճակատ ճակատի, և հաւատքի ի՞նչ յաղթանակ. ի՞նչ երկաթակուռ հարուած բռնապետութեան անխախտելի օրէնքներուն. ի՞նչ արիւնի հեղեղում քեզ անարժան թշնամիիդ վայրագ շարքերէն Եւ դիակի ու բացուած լամբքերու ի՞նչ արդարացի մեռելակոյտ, Մեր բոլորին վրիժաճարաւ աչուրներուն առջև...

Կովկաս, յաղթակամօրէն դուն եղար, որ յայտնութիւններում գերագոյնը ըրիր. Բու բազուկներուդ հուրին մէջն էր գետնահարող զօրութիւնը Ցեղին, Բու մտածումիդ մէջն էր, որ ծնաւ կարմիր արևը յուսահատեալ Յաղթութեան, Բու արիւնիդ մէջն էր, որ վառեցաւ ճշմարիտ արիւնը երազուած Հնդկումին.

Եւ այսպէս իրիկում մը քու զինավառ ձեռքերը ազատութեան աստղերու նիզակուեցան թշնամի երկնքներուն չարիքի կամարներէն կտրելու. Բիչ մը լոյս, քիչ մը կեանք, քիչ մը սէր և քիչ մը երազ. Բու խոռովեալ սերունդիդ և ի քեզ ակնդէտ ու տառապող եղբայրներուդ համար:

Օ՛, փառք քեզի, և փառք շանթամարտ հպարտութեանը քու լեռներուդ, Կարծես ամոնց ապառաժներուն յաւիտեմական տարրերէն եմ կառուցուած՝ Անպարտելի հասակները քու սևահեր ու հրաչուի որդիներուդ, Բու անտառներուդ ահագնաթափ փոթորիկը գիշերական Ամոնց զինուորակալի կուրծքերում մէջ իր հսկայական հեքը դրաւ. Բու հովիտները Ամոնց քայլերում առջև Յոյսին ճամբաներում պէս կանանչացան... Եւ քու հողմերդ Ամոնց շունչին մէջն փրկութեան ծամը շեփորեցին, Բու ծոցիդ մէջն է, քու սրտիդ վրան է, քու արեգակիդ տակն է Եւ հարազատ և անպարտելի և անվեհեր զանգուածը մեր հիմաւուրց Ազգին, Մեր մեծամացեալ ճակատները այդտեղ էր որ վերջապէս իրենց մութէն պայծառացան, Այդտեղ էր, որ սկսաւ պայքարի սուրերում ամենէն արդարը շողալ, Այդտեղ էր, որ ժողովուրդը իր իրաւունքը իր կուսփովը պահանջեց, Այդտեղ էր, որ Ամ չի լացաւ, չի ծնրադրեց և իր գլուխը հողին չի հասաւ, Այդտեղ էր, որ կատաղութեամբ զարկաւ և հպարտօրէն զարմուեցաւ, Այդտեղ էր, որ արդարութիւն որոտացողի իր ճակատը փառակերտ Արևմուտքի աշխարհներում դիմաց շահերու պէս ցուցացուց, Այդտեղ էր, որ իր ամէնքի և պժգանքի թուքը թագակրիմ նետեց, Եւ այդտեղ էր, որ վերջապէս Անիրաւութիւնը օր մը ամօթահար պարտուեցաւ, Եւ քեզի համար, այդտեղ է, որ այսուհետև կոթողները Փառքին Մարմար առ մարմար սերունդիդ ձեռքերովը պիտի բարձրանան...

Ձարկ, Կովկաս, աւերակեալ ու արցունքոտ Հայաստանին աչքերը քեզի կը մային. Ան զիտէ, որ քու թշնամիիդ ատելութիւնը իր թշնամիներէն է որ կը բզխի, Երբ իր գերեզմանին մոխիրը իր գութկան հովիտներում հետ եկաւ ճամբաները սզաւորել, Երբ իր արիւնը եկաւ քու եղբայրական տանը սեմերը թրջել, Երբ իր կոտորած բազուկը քու կտրիճի ձեռքերուդ ի խնդիր քեզի դողդոջեցաւ, Թշնամին մոյմն էր այն ատեն, այն որ այսօր, քու պաշտպանի բազուկէն զարհուրած՝ Կուզէ զայն շախշախել, կարենալ տօնելու համար վերջնական մահացումը մեր Ցեղին... Ուրեմն, զարկ, Կովկաս, թէ՛ն գիտեմ որ քու ասպետական ձեռքերուդ հարուածին անարժան է ամ, Ձարկ, թէ՛ն գիտեմ որ քու սուրիդ վեհութիւնը պէտք չէ՛ր արատաւորել, Այդ անբամներու խոթանքին թունաւոր ու պժգալի արիւնէն... Ձարկ, Թէ՛ն գիտեմ որ հերոսները հերոսներու միայն կրնան ընդհարուիլ, Ձարկ, սա անարգ ճակատագիրը շախշախելու և Չարիքը ըմբերանելու համար, Ձարկ, որովհետև ամեն Յոյս գրեթէ կը յուսայ և ամեն Ապագայ գրեթէ կը պաղատի, Ձարկ, վասնզի ամեն Ազատութիւն ու ամեն Արև. քու հարուածիդ կայծերէն պիտի ծնամին. Ձարկ, Բու անթառամ սիրոյդ և ատելութեանդ չափին խորութեանը համեմատ. Ձարկ, զարկ, ահաւասիկ հորիզոնները կը կապոյտմամ, ահաւասիկ Առաւօտները կը ճեղքուիմ, Ձարկ, ազատաբեր հարուածիդ շփոթը Մասիսէն ի Տաւրոս և մինչև Հայրենիքին խորերը կը թնդայ...

ԼՈՒՍԱԽՈՐ ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻՆ

Կ Ո Չ

(Այս կոչի ժրաներէն բնագիրը ուղարկւած է ակաճաւոր Եւրոպացիներին եւ Եւրոպական մամուլի սղոյեցիկ օրգաններին)

Ք ա Ղ ա ք ա ց ի ն է ր ,

Մի հսկայական ողբերգութիւն է խաղաղուած այսօր կովկասեան աշխարհում, որ վերարտադրուած է մեր աչքերի առաջ Բարբարոսների արշաւանքի արհաւիրքները:

Քաղաքակիրթ աշխարհը չը պէտք է մնայր՝ այդ անցքերի ճշմարիտ իմաստի նկատմամբ,—անցքեր, որ սոգէտ ու չարակամ հրապարակախ սնեքը ներկայացնում են սխալ լուսաբանութեամբ, մերթ ի բնւ արտայայտութիւն ազգայնական անտազօնիզմի, մէկ ցեղի հարստահարման միւսի միջոցով, մերթ իբրև բացարձակ ապստամբութիւն ցարիզմի դէմ: Դա մի մղեցիկն, ահարկու կռիւ է, որ մուսուլման տարրը, ռուս կառավարութեան դրոմամբ, հրատարակել է Անդրկովկասի հայ ազգաբնակչութեան դէմ. դա հայկական դաւաճանների լիակատար աւերումն է, որ կատարուած է վայրենի հորդանների ձեռքով, ռուսաց իշխանութիւնների անտարբեր աչքերի առաջ, որոնք զործուած են միայն հայերի դիմադրութիւնը խորտակելու համար. դա բոլոր խաւար ուժերի միացումն է ընդդէմ մի փոքրիկ ժողովրդի, որ իր իրաւունքների դիտակցութիւնն ունի և որ ներկայացնում է առաջնորդական մի տարր այդ մուսլլ անբախտ շրջանում. դա, մի խոսքով, հ ա կ ա յ և ղ ա փ ո խ ու թ իւ ն ն է, կողմակերպած շատ հմուտ կերպով, մի անհաւատալի անդթութեամբ, այն նոյն մեթօդով, որը Եւրոպայի Մարդասպանի հաշտին ստեղծեց:

Թիւրքիայում, ինչպէս և Ռուսաստանում—նոյն անողորմ ճակատագիրը... Ամեն տեղ հայ ժողովրդի ազատագրական ճիգերը բաղկանում են դժոխային մեքենայութիւնների, յարուշած այդ նախնական ուժերի, այդ անդրպատմական տարրերի կողմից—քիւրդ, թիւրք, բաշիբոզուկ—որոնք լինելով անմատչելի ամեն տեսակ առաջադիմութեան, գործիք են դառնում բացառապէս շարքի ու աւերումի:

Արդիւ Համիդը, սարսափած յեղափոխութեան ու ինքնավար Հայաստանի ուրւականից, առաջ քաշեց քրդերին ու տաճիկներին և հարկւր հազարաւոր զոհեր պատճառեց, ըմբոսաներին հանդատացնելու՝ համար: Եւ Համիդը իր արբքների հիմք էր բերում աւանդական պետական պատճառը—բռնաւորների գերազոյն փաստը:

Նեկօրա Բ. շարժման մէջ է դնում կովկասի արիւնարբութիւններին, Ռուսահայաստանը աւերելու ու արիւնելու համար. նա ևս առաջ է բերում նոյն պատճառաբանութիւնը, — «la Raison d'Etat!»

Պետերբուրգում մի տարօրինակ գաղափար են կազմել Յեղափոխութեան ընթացքի մասին կայսրութեան մէջ: Հզօր կամարիլլան կարծում է, որ բուն ռուս ժողովուրդը հեռու է ապստամբական ձգտումներից, և որ յեղափոխական ամեն տեսակ շարժումները գալիս են Ծայրերից, — Էնկերից, հրէաներից, վրացիներից, հայերից: կառավարչական այդ ենթադրութիւնը դառնում է ճշմարտանման այն հանգամանքից՝ որ յիբաւի վերջին երկու տարւայ ընթացքում Ծայրերը ցոյց տւին իրենց աւելի մոլեղնորեն յեղափոխական, քան կենտրոնները, որոնց շարժումը մասամբ անգամալուծուած է ռուս կուսակցութիւնների ներքին պայքարներով:

Երկու տարի առաջ Անդրկովկասի հայ ժողովուրդը ընդհանուր ապստամբութեամբ պատասխանեց այն անամօթ ուկաղին, որով յափշտակուած էին հայ եկեղեցական կալուածները, և Պէլզէի կառավարութիւնը զարմացած մնաց փոքրիկ ժողովրդի յանդգնութիւնից, որը ամենակարող մի ուժ-ժիւղի աակ (պատերազմից առաջ էր) համարձակուած էր, զէնքը ձեռնին, պահանջել իր հաւաքական իրաւունքները:

Այդ վայրկեանից ցարիզը յոյսաւ զործունէութեան մի նոր ծրագիր ռուսական Հայաստանում: Ռուսացման բոլոր միջոցները վիժելով՝ նա դիմեց աւելի դ ո Ր ծ ն ա կ ա ն մ ի շ ո յ ն ք ե Ր ի: Թունաւորել ազգերի յարաբերութիւնները, այնքան այլապար իրենց բարքերով ու կուլտուրայով, կազմակերպել «հայկական Վիշինեաների» մի շարան և ջլատել ընդմիջա երկրի ազատագրող ուժերը. ահա մի միտք, այնքան ներկական Գօլիցիների ու Պօբեդոնօսցեիների համար, որ միշտ աւելի ու աւելի հող վատտակեց կառավարչական բարձր շրջաններում, նոյնիսկ կայսերական պալատում:

Այդ ծրագիրը յաջողաբար իրագործեց: Նախ առաջադրին մի սոսկալի արիւնաւութիւն Բագրի մէջ. . . Իշխանութիւնները պատրուակ բերին, ինչպէս այսօր, «զօրքերի անզօրութիւնը»... Ոչ մէկը մարդասպաններից չը ստացաւ ամենաթոյլ պատիժ անգամ, ոչ մի կանխող միջոցի չը ձեռնարկեց ապագայի համար, մերժեցին արդիւնաբերողների առաջարկները՝ կողմակերպելու սեփական միլիցիա—և միւս կողմից carte blanche տւին համալսամական քարոզիչներին ու շարունակեցին զինաթափ անել հայ ժողովրդին: Ռուսական սատիկանութիւնը հասաւ մինչև այն սատիճան, որ սովորեցրեց Երևանում թիւրքերին զինավարժութիւն:

Հպիւ Բագուն մտել էր իր սովորական կեանքի շրջանը, և ահա մի ուրագան պոյթեց Երևանեան նահանգի և մասնաւորապէս Նախիջևան դաւառի վրայ... Թիւրք խուժանը, այստեղ ևս պաշտպանւած, խրախուռած սատիկանութիւնից, որ բաղկացած է մեծ մասամբ թիւրքերից, ազատ ապարեզ տւեց իր աւերիչ բնադրումներին. . . Հետեւանքը—հազարաւոր զոհեր, մասամբ սպանւած, մասամբ կենդանի այրւած և 43 դիւղ աւերւած: Թիւրքերը այնուամենայնիւ չ'աջողեցին մահացու հարւած տալ հայ ազգաբնակչութեանը, հանդիպելով հայ կամաւորների դիմադրութեան: Նրանք յետ քաշեցին, աւելի լուս պատրաստուելու համար: Նրանք ահագին քանակութեամբ զէնք ներմուծեցին Պարսկաստանից ու Թիւրքիայից. նրանք հազարաւոր համախոհներ ժողովեցին երկու սահմանակից և կրօնակից երկրների մարդակերներից:

Եւ ահա այսօր նրանք արշաւում են դէպի հայաբնակ գաւառները, սոսից ցղլուկ զինւած, ամեն բան այրելով ու աւերելով... Ի՞նչ դիմադրութեան կարող են հանդիպել նրանք... կենտրոնական կառավարութիւնը, որ սպասում էր բարբարոսութեան այդ յարձակողական վերադարձին, բնական հրաժեշտ չէր սեպել զօրքեր դնելու այդ գաւառներում, ուր նա զինաթափ է արել հայ ազգաբնակչութիւնը: Եւ այժմ, երբ ամբողջ դիւղեր աւերւած են, Չանգեղաւորում ու բնակիչները կատարւած՝ նա սկսում է հին երգը երգել՝ «զօրքը անդ է»... Չարմանալի չի լինի, եթէ համալսամական մեծ բանակը, ունենալով իր spiritus rectorum-ը (ոգեկան վարիչը) Եւրոպայի պալատում, զգալով ինքզինքը ամենակարող, վաղը գրոհ տայ ընդհանուր բրիտանիկութեան և նոյն իրեն կառավարութեան դէմ...:

Խուժանների գրոշակների վրայ գրւած է «ղազաթ» (որբազան պատերազմ) և նրանց նշանախ սքն է՝ ջնջել

քրիստոնեաներին: Գաղստանում իսկ դրուժիւնը անհանգստացնող է. մասմէդական ահաբեկի զանգւածները, թերևս, գտնուում են ընդհանուր ապստամբութեան նախատնակում: Ցարիզմը կը քաղէ իր հակահայկական անմիտ ու զազրելի քաղաքականութեան պտուղները. այդ քաղաքականութիւնը ուղղւած էր հայոց կարծեցեալ ս ե պ ա ր ա տ ի զ մ ի (անջատական ձգտումներ) դէմ, նա պիտի զարնէի ի վերջոյ, թերևս, մասմէդական սեպարատիզմի մի ահաւոր շարժման:

Իսկ առ այժմ սոսկալիօրէն տառապողը հայ ժողովուրդն է, բոլոր անիրաւութիւնների այդ յաւիտենական զոհը. նա է, որ ստանում է բարբարոսների նոր արշաւանքի մահացու հարւածները: Մի ժողովուրդ, էսպէս խաղաղաէր, հպարտ իր անցեալով, նր դրէսի ու քաղաքակրթութեան իր սիրով, անգէն մատնւած է իր վատագոյն թշնամիներին: Այն վայրերում, ուր նա զինւած է, քաջութեամբ յետ է մղում ամենաահեղ յարձակումները. բայց նրա ջանքերը սխտեմատիկաբար ջլատոււմ են բաշխօզուկ կառավարութեան ձեռքով:

Ք ա ղ ա ք ա ց ի ն ե ր ,

Ստորաքարշ մամուլը, ցարիզմի զաղիր սպասուորների դեկալորութեամբ, ձգտում է վարկաբեկ անել կովկասեան հայերին լուսաւոր աշխարհի աչքում, պատասխանատու բռնելով նրանց այսօրւայ աղէտների համար: Ով որ վերջին տարիներում հետևել է մեր երկրի անցքերին, զիտէ, որ հայ ազգաբնակչութիւնը, նոյնիսկ ամենայնզոհական նրա տարբերք, երբէք չեն կամեցել ցեղային կռիւներ յարուցանել, դառնացնել դարաւոր լաւ յարաբերութիւնները իրենց մուսուլման հարւանների հետ, որ հայը, ընդհակառակը, քարոզել է միշտ համերաշխութեան գաղափարը բոլոր տարբերի մէջ, յանուն երկրի ընդհանուր բարօրութեան:

Հայերի կարծեցեալ անտեսական առաջնութիւնը (հեգեմոնի) կովկասում, թիւրքերի հարստահարումը հայերի ձեռքով՝ մի սուտ է, որ խնամքով տարածում է նոյն հայատեսաց մամուլը: Ռուսական Հայաստանի մշակւած ու անմշակ հողերի մեծագոյն մասը պատկանում է պետութեան ու թիւրք բեկութեան, որը իր ծոյլ ու գիշատիչ հակումներով, իշխում է Ֆէօդալական իշխանութեամբ, կեղեքելով հայ և յաճախ թիւրք գիւղացիներին, հողի իսկական մշակողներին: Նոյնիսկ Բագուում, նախապէս արգիւնաբերութեան այդ ահաբեկի շրջանում, թիւրք խոշոր կապիտալիստների թիւրք պակաս չէ հայ կապիտալիստների թւից, այնինչ՝ հայ ազգաբնակչութեան մեծ զանգւածը, քաղաքներում և գիւղերում, ոչ պակաս զրկւած ու թշուառ է, քան թիւրք պրոլետարեաւոր:

Եթէ կարելի լինէր խ ս ե լ ազգային արտօն ու լ իւ ն ե ր ի մասին կնուտի թագաւորութեան մէջ, սպա անշուտ, թիւրքն է—տիրապաշտ ու պահպանողական—որ վայելում է որոշ արտ. նուրթիւններ հայի դիմաց, որը հաւածւած է լի է իբրև հպատակ, ի է իբրև անդամ մէկ պատմական համախմբման, միշտ կենդանի և միշտ ձգտող դէպի ազատութիւն:

Գարձեալ թիւրքն է միշտ նախընտրելի՝ պետական պաշտօնեաների ընտրութեան միջոցին: Այսպէս, հայկական դաւառների մեծ մասում սոսիկանական պաշտօնեաները, սկսած սոսիկանապետից մինչև յետին ետաուլը՝ թիւրքեր են կամ «ուղղափառներ»: Երբէք չէ տեսնուել մի հայ՝ իր երկրի որևէ նահանգի զբլու կանգնած:

Ոչ, քաղաքացիներ, ցեղերի, անտեսական արտ. նուրթիւնների ու շահերի հակառակութիւնը չէ, որ ծնունդ է տուել կովկասեան արիւնտա ողբերգութեան, որի մանրամասները սառուու բերին ամբողջ աշխարհին: Թիւրք խուժանը, վայրագ ու անգիտակից, կոյր գործիքի դեր է միայն կատարում Այդ մեծ աղէտի իսկական պատճառը *divide e impera*-ի նենգ քաղաքականութիւնն է, —ցարիզմի քաղաքականութիւնը:

«ԳՐՕՇԱԿԻ» ԽՄԱՍԳՐՈՒԹԻՒՆ

Ք Ր Ի Ս Տ Ա Փ Ո Ր Ի Ն

Դու անցար, հերոսս, դէ՞հ համզիստ քեզ քում.
Դու լուսաղէմիմ մեռար լիայոյսս,
Դու ճամբորդ էիր դէպ ազատութիւն,
Երբ դեռ հեռո՞ւ էր, հեռո՞ւ՝ արշալոյսս:

Տես իմ՛չ հերոսներ՝ երգովը ստեղծւած՝
Փակեցիմ աչքերդ, որ համզիստ առմուս.
Հերոսների մէջ դու մեռար, հերո՞ս,
Մարմնով դառար հող, հողով՝ արշալոյսս:

Էրմէ՛կ քո յոյսիմ, մա՛, որ չէր դողում,
Երբ թոյլ տնջում էր մեր ճահիճմ անյոյս.
Այն օձն՛ր էիմ և գորտեր սողում,
Քանզի գալու էր անշու՛շտ արշալոյսս...

Սակայն երբ ազգը թմբկով ու փողով
Դէպ՝ ազատութիւն երթայ սրտայոյզ,
Դու կգաս այնտեղ յարուցեամ շողով,
Բայց մնջի՛ր... դեռ կայ մինչև սաշարոյլ...

Ճ Ո Ւ Ի Ն

ԱՆԳՐԿՈՎԿԱՍԻ ԱՐԻԻՆԱ ՀԵՂ ԸՆԳՀԱՐՈՒՄՆԵՐԸ

ԲԱԳՈՒԻ ԸՆԳՀԱՐՈՒՄՆԵՐԸ

I

Բագու, սեպտեմբերի 1.

Տեղիս քաղաքական, զինւորական, ոստիկանական իշխանութիւնները այս անգամ աւելի դաւաճանօրէն վերաբերւեցին, քան փետրւարի 6—9 օրերում, բայց այս անգամ այնքան ճարպիկ, որ դեռ ևս ընդհանուր հասարակական դայրոյթ չառաջացրեց, ընդհակառակը՝ ամեն կողմից բացականչեցին թէ «գեն. Գուբերնատորը խիստ միջոցներ ձեռք առաւ»:

Ճիշտ է, որ օգոստոսի 20-ին, կոտորածը սկսելուց մտ

20 րոպէ յետոյ զօրքը փողոց է հանւելը մօտ մի ժամ յետոյ փողոցի խմբական կոտորածը դադարեցւել է, բայց դրա փոխարէն, էսպէս սպանութիւնները դադարեցնել տալու համար ո՛չ մի լուրջ միջոց ձեռք չէ առնւած. և և հէնց այ պատճառով Բալխանին ու Բիբլի-Էյբաթը ոչնչացրւած են:

Գրեւ էի, որ կոտորածը սկսելու համար ձիաբարձի ծառաների գործադուլը և զօրքի ու գործադուլ անողների մէջ տեղի ունեցած ընդհարումները պատրակ դառան: Բայց եթէ այդ գործադուլն էլ չը լինէր, եթէ այդ պատճառով ընդհարումներն էլ տեղի չունենային, թուրքերը մի պատրակ պիտի ստեղծէին, որովհետև

Շուշայ մէջ հայ-թիւրքական ընդհարումներն և այնտեղ թիւրքերն աւելի թաւով մեծ կոտորելու մասին հաստատուած տրամադրութիւնը ակնյայտնի այնքան լարուեցոյ որ րոպէ առ րոպէ սպասուում էր թէ այստեղ էլ կը սկսեն, ու ըստ այնմ նախազգուշութիւններ ձեռք առնուեցան:

Գեռ Շուշայ ընդհարումներն էլ տեղի չունեցած, և են Տէր Սարգսեանի, Թովհեանի և այլ անհատական սպանութիւններէ յետոյ՝ երբ մասնակի գաղտնի տեղեկութիւններէ հետ զուգարիպող դէպքեր բաւական ուժեղ կերպով կասկածել էին տալիս, որ Բագուում կազմակերպուած է թիւրք պանիսլամական մի գաղտնի կոմիտէ, որ այդ կոմիտէի գործն է կատարած անհատական սպանութիւնները, որ այդ կոմիտէի վարիչներն են Աղաէփ, Թովհէրբաշէփ, Թաղիէփ, Սաֆար Ալիէփ, Բախիշ բէկ և այլն: Է. Յ. Գ. Վաշաբեկիչ մարմնի կողմից մի նամակ ուղղուեց հայ-թիւրքական միջազգային խաղաղարար կոմիտէին՝ ազգարարելով, որ թէ քաղաքակրթութեան-յուսաբարիմական նպատակով կազմուած լինէր թիւրքական կազմի կոմիտէն, Է. Յ. Գ. ը Ծափաշարելով առաջինը կը լինէր ձեռք մեկնելու, բայց քանի որ փաստերը հակառակն են ցոյց տալիս, և քանի որ նա կազմել է հայ ժողովրդին ահաբեկելու, կոտորելու, այդ պարագայում՝ հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործին ներկուած Գաշնակցութիւնը չէ կարող ձեռնպահ մնալ ու անխնայ կը լինի դէպի այդ գաղտնի թիւրք կազմակերպութեան ղեկավարներն ու ներքնադիրները, հետեւաբար պահանջուած է խաղաղարար մարմնից միջոցներ ձեռք առնել, ազգերը արգելել եղբայրասպան ընդհարումները, ոճիրները:

Այդ նամակի բնագիրը ուղարկել է քաղաքագլխին՝ որ միևնոյն ժամանակ նախագահն է խաղաղարար մարմնին, որին անդամակցուած է և Աղաէփ: Նամակի պատճէնները ուղարկուած են եղել հայ և ռուս անդամներին (խաղաղարար մարմնի), որպէս զի նախագահը ստիպուած լինի հրապարակ հանել նամակը:

Երբ խաղաղարար մարմնի նիստում կարդացուած է նամակը Աղաէփը յայտարարուած է թէ իրենք նկատուած են այդ նամակի բովանդակութիւնը իբր հրաւեր պատերազմի, և իրենք պատրաստ լինելով՝ ընդունուած են այդ պատերազմի հրաւերը: Աղաէփի այդ խօսքին ի միջի այլոց պատասխանուած է մի ռուս անդամ, կրթմանովակին, թէ ընդհակառակը այդ նամակի բովանդակութիւնը այնքան խաղաղասիրական է, այնքան հասմետ ու տրամաբանական է որ նրա նմանը իր կեանքում հազարէպէ և եղել կարգաւ և այլն:

Այս միջոցէպը ակներև կերպով աւելի քան մի ամիս առաջ ցոյց էր տալիս թիւրքերի՝ Աղաէփների պատրաստութիւնը երկրորդ կոտորած սկսելու համար. և հաւանականաբար անհատական սպանութիւնները կատարուած էին այն նպատակով, որ հայերին էլ ստիպել տային նոյն սխտանով պատասխանելու և զբանով առիթ ունենային կոտորածը վերսկսելու:

Բայց թիւրքերը չունեցան այդ առիթը: Օգոստոսի մէջ թիւրքերի գաղտնի ժողովները, որ առաջ գիշերային էին լինուած ու յաճախ քաղաքում սկսեցին օր ու ցերեկով լինել: Օգոստոսի 12-ից բերդանկաններով զինուած՝ հանդիսաւոր կերպով գումարուում էին Բալխանում՝ Մուխտարովի կառավարիչ Բախիշ բէկ Զիվանշիրի մօտ: Այդ ամենը անշուշտ տեսնուած էր տեղական կառավարութիւնը, բայց ո՛չ մի միջոց ձեռք չէր առնուած, և թիւրքերը այնքան լրբացել էին, որ ո՛չ մի հայ օրիորդ կամ կին ապահով չէր, թէ փողոց դուրս գալիս թիւրքական լպիրշ անարգանքների չի ենթարկուի:

Օգոստոսի 19-ին արդէն գագաթնակէտին էին հասել թիւրքական գրգռիչ արտայայտութիւնները: Թիւրք բուրժուազիայի մի պատգամաւորութիւն գնում է յայտնելու գեներալ գեներալներին, թէ Շուշայ դէպքերի առիթով թիւրք երիտասարդութիւնը այնքան գրգռուած է, որ իրենք այլ ևս հնարաւորութիւն չունին զսպելու:

Հետեւաբար պատասխանատու չեն լինի Գրանց որպէս թէ գեն. գուբերնատորը պատասխանել է թէ կառավարութիւնը երբէք մտադրութիւն չէ ունեցել իրենց պատասխանատու բռնելու և թէ անկարգութիւններ պատահելու դէպքում կառավարութիւնը կարող է անմիջապէս ոճրագործներին զսպել և պատժել:

Նոյն օրը և հայ-բուրժուազական մի պատգամաւորութիւն ներկայացու գեն. գուբերնատորին, խնդրելով որ անմիջական միջոցներ ձեռք առնելն սպասուող անկարգութիւնների առաջն առնելու համար, որին պատասխանել է թէ կառավարութիւնը ձեռք առել է արդէն պէտք եղած միջոցները:

Ամսի 20-ին, կէս օրից առաջ, Արամնօլօզսկի փողոցում, մի թիւրք մագործ է սպանուած պատահաբար, թիւրքերը վերցնելով դրա դիակը, թափոր են կազմում թիւրքական թաղերում ու փողոցներում, դիակը ման անելով ու այդպիսով ամբոխին գրգռելով: Այս օրից յետոյ տեղի է ունենում ձիաքարշի գործադուլ անողների և զօրքի միջոցէպը և ժամը 5-ին սկսուած է կոտորածը:

Այս փաստերը թուում են և այդպիսի բազմաթիւ փաստեր կարելի է թուել ոչ թէ նրա համար որ մենք մեզ համոզեց, թէ հայերը նախապարձակ չեն եղել. դա միանգամայն ծ ծաղելի կը լինէր. այլ շարամաութեամբ կամ միամտութեամբ մեղքը հայերի վրայ գցել աշխատողներին ցոյց տալու համար, թէ դէպքերը ի՛նչպէս են զուգարիպել:

Նախ քան կոտորած սկսելը՝ Բախիշ բէկը, Բակինսկի Տրուբուրօլօզի կառավարիչ Եսկովիչին յայտնուած է, որ զարաբազից թիւրքերը շատ են գրգռուած և թէ է ինքը աշխատել է զսպել, բայց յոյս չունի, թէ այդ դերը իրեն յաջողի այսուհետև էր Նոյն Բախիշ բէկը մի ուրիշ ժողովում յայտնել է թէ «բազարնակ զարաբազից թիւրքերը իրեն դիմում և հարցնում են՝ «այս տեղ վրեժխնդիր լինե՞ք հայերից, թէ՛ Ղարաբաղ գնանք» և ինքը չի իմանում, ի՛նչ պատասխանի:

Այսպիսի բազմաթիւ փաստեր դիտմամբ մոռացուած են կառավարական շրջաններում, և առանց որոշելու կամ որոշել ցանկանալու, թէ ո՞ր կողմն է նախապարձակ և մեղաւոր՝ «պատամբ»՝ անականով անխտիր մկրտում են:

Ամսի 20-ին երբ պայթեց կոտորածը ի՛նչ արեց կառավարութիւնը.—միակ բանը որ արեց, քաղաքում դադարեցրեց մի ժամայ մէջ ընդհանուր կոտորածը, բայց դրա փոխարէն զոհեց Բալխանին ու Բիբի-Նյալթը: Տասնեակ հազարաւոր բանուորներ հրի ու կողոպուտի մատնեց, զինաթափ արեց:

Ընդհանուր կոտորածը դադարել է, բայց մասնակի սպանութիւնները շարունակուած են: Այս շաբաթայ ընթացքում սպանել են 40 հայեր՝ որոնց փոխարէն հազիւ մի 15 թիւրք:

Ոստիկանական նենգամիտ ղեկուցումներով՝ խուզարկում են հայկական տներ ու թաղամօթի բռնելով հանդերձ, 2—3000 րուբլի էլ տուգանք են վերցնում տան տերերից, նոյնիսկ այնպիսի տներէ՛ց՝ որոնցից ո՛չ մի գնդակ չէ արձակել: միայն նրանց մեղը այն է եղել, որ հայ են ու հարուստ և հասարակ ոստիկանների պահանջած կաշառները չեն վճարել: Նոյնանման դէպք է պատահել մինչև իսկ օտարներ հետ, օրինակ Չայցեփի հետ:

Այդ ամենի փոխարէն միայն Ալիէփի տունն են ռմբակոծել, այն էլ գլխաւորաբար այն պատճառով, որ այնտեղ գտնուել են բազմաթիւ զինուած թիւրքեր և զօրքի վրայ են կրակել:

Մեարօպօլի հիւրանոցից մի քիչ վերև, Նիկօլայէփսկի փողոցի վրայ գտնուող ընդարձակ քարվանսարում լիքն են զինուած թիւրքեր, որանցից յաճախ գնդակահարութիւններ են լինում. մի քանի անգամ յստուկ պատգամաւորութիւն է գնացել դեն. գուբերնատորի, մօտ որ այդ տեղի համար միջոցներ ձեռք առնի, բայց, հակառակ տրուած խոստումների, մինչև այսօր ոչինչ չէ արւած:

Կոտորածի երրորդ օրը նահանգապետը հրաւիրուած է երկու կողմին հաշտութիւն կայացնել: հայերը ուրա-

խուժեամբ ընդունում են, միայն թէ հիմնուած բազմաթիւ փորձերի վրայ, մահաբազանների խաբէութիւններին մի անգամ էլ զոհ չը լինելու համար, առաջարկում են հաշտութեան անկեղծութիւնն ու տեւականութիւնը երաշխաւորող պայմաններ, որոնց թիւրքերը մերժում են, բայց պ. նահանգապետը զեկուցանում է, թէ հայերն են մերժում հաշտութիւնը: Այս զեկուցման վրայ հիմնուած՝ փոխարքան հանքային ջրերից հեռագրով դիմում է կաթողիկոսին, որպէսզի իրա հեղինակութիւնը գործ դնի հայերի վրայ հաշտելու համար: Կաթողիկոսը ի հարկէ ստուգելով, պատասխանում և յայտնում է ստուժիւնը:

Բալխանիի հիւանդանոցի վրայ թնդանօթ են արձակում և այդ անօրինակ ոճիրը քողարկելու համար՝ զեկուցանում են, թէ այնտեղ պատասպարած հայերը զօրքի վրայ կրակեցին:

Քաղաքում շն հայերի տուն է այրել. ոստիկանութեան կողմից զեկուցում չը կայ, թէ թիւրքերը այրել են հայերի տները, բայց ամեն օր տեղական թերթերի էջերը լիքն են ոստիկանութեան պաշտօնական ստայօր տեղեկութիւններով հայերի դէմ:

Կոտորածի հէնց առաջի օրից՝ բազարի տակից սկսած մինչև կայարան մաքրած են թիւրքերից, բայց նրանք դիմեցին հնարագիտութեան. հայի և ռուսի հագուստներով ծպտւած՝ մտան քաղաքի հայկական մասը և սպանութիւններ կատարեցին. դրանց մասին ո՛չ մի պաշտօնական զեկուցում. ամեն ինչ հոյերին են վերաբերում: Աղաճառ Շարքի Ռուսի թիւրքերէն թերթի գրեթէ բոլոր տարիներին սպանեց այսօր: Այդ անձնաւորութիւնը առած էր Սըաէվ, Թոփչիբաշէվ և ընկ.-ից, որովհետև իրենց համախոհ չէր. . . . Սպանեցին քաղաքի հայկական մասում, ի հարկէ էլ ծպտւած թիւրքերի ձեռքով և խէնչալով, բայց երբէք այդ գազտիքի քօղը չի պարզի ոստիկանութիւնը:

Կարելի է ասել որ թիւրք և կաշառակուլ տարից կազմած ոստիկանութիւնը՝ գլուխ ունենալով Լիլէէվին, աւելի համարձակ ոճիրներ է գործում այժմ, քան Կիստուրի 6—9 օրերում:

Նոյն ոստիկանութիւնը՝ որ կոտորածի օրերում ուղղակի իր տրամադրութեան տակ ունէր զօրքը, Բիբի-Եյբաթում հայերին զինաթափ անելուց յետոյ, անպաշտպան թողեց ու հեռացաւ, որից յետոյ ամբողջ այդ շրջանը հրի ու թալանի մատնեց:

Բալխանիի շրջանում աւելի վատն արեց: Իմ իսկ գիտութեամբ և մասնակցութեամբ բազմաթիւ դիմումներ եղան օգնութեան հասնելու համար, բայց ոչ մի տեղ ոչ մի օգնութեան չը հասաւ, մինչև իսկ զօրք գտնւած տեղերից զօրքը յետ քաշեց:

Զարբատի շրջանից հեռախօսով և գրաւոր պաղատագին խնդրանքներ լինելուց յետոյ, մարդիկ տեսնելով որ օգնութեան չէ հասնում, մահը աչքերնին առած, մի պատգամաւորութիւն են ուղարկում ոստիկանապետի մօտ: Այնտեղ ուր թիւրքերը ազատ մուտք ունին, նախ արգելում են մուտքը և ոստիկանապետի կարգադրութեամբ զինաթափ անելով պատգամաւորներին՝ քաղաք ձամբում:

Փիլթօյէվի մօտերը գտնւած պահակազօրքը վերցընում է տեղական պրիստաւը ու գնում է գիւղ. յետոյ երբ մարդիկ, յուսահատուած, թողնում ու դուրս գալու են ստիպւում, ետևից գալիս են աւերում, կողոպտում: Մանթաշէվի գործարանի համար զանազան տեղերից ստիպողական հեռագրական միջնորդութիւններ են հասնում գեն. գուբերնատորին. տեսնելով որ այլևս անհնար է զօրք չուղարկել, նոյն պրիստաւը անմիջապէս գալիս է Զարբատից ի մօտ, նրանց մեծ մասը ուղարկում է Մաշտաղի գիւղ: Յետոյ զօրքը հասնում է. հասած ժամանակն էլ մնացող թիւրքերը կրակում են զօրքի վրայ, և այդ պատճառով մի երեսուն հոգի նրանցից զօրքի կրակի տակ ընկնում են, բայց այդ մասին էլ ոչ մի պաշտօնական տեղեկութիւն:

Ոչ քաղաքում, ո՛չ թիւրք գիւղերում թիւրքերին

զինաթափ չեն արել, բայց հարիւրաւոր հայերի զինաթափ արեցին, որոնք այժմ զրկւած ինքնապաշտպանութեան միջոցներից, թալանւած, այրւած, անօթի ու մերկ, փողոցներում թափառում են, ամեն մի վարկեան թիւրքի ու ոստիկանական նենգաւոր գնդակներին կամ խէնչալին զոհ գնալու ենթակայ:

Թիւրք աղագանակութիւնն ու շրջակայ թիւրք գիւղացիները քանդեցին էլեքարական լուսավառութիւնը, ջրուղին և ամբողջ նաւթարդիւնաբերական շրջանը. վնասը նսկայական է. . . . Շարժել է ամբողջ Կովկասի մահաբազանութիւնը: Ալադիկավաղարի շրջանում երկաթուղային գծի և գնացքների վրայ են յարձակել, ռուս գիւղեր են կոտորել: Դուռում ամբողջ չորս օր զօրքը ստիպւած է եղել հայերի հետ միացած թիւրքերի դէմ պատերազմել, զօրքի փամփուշտը սպառել է, հայն է փամփուշտ հասցրել, տեղական իշխանութիւնը յուսահատ դրութեան հասնելով՝ ստիպւել է յայտնել հայերին որ «ինչ կերպով որ նրանք կարող են պաշտպանել ու գլուխնին ազատել թող անեն», ու այդ պարտաւորում. . . միայն արձակւած ռուսներ վերջ է դնում ահաբեկի ընդհանրութիւնն ու համաձայնակ հրդեհին: Շնորհիւ մահամեղական ու կաշառակուլ պաշտօնեւորութեան անպատիժ ոճիրները այնքան են քայալբերել, որ արդէն թիւրքերից լսում են սպանալիքներ պետութեան դէմ համիսլամական ծրագրերի մտքով— և դարձեալ հայն է զինաթափ անում:

Պատմութեան ապագայ ընթացիկները չը պիտի հաւատան ուսու ըլերօկրատիայի այսքան կուրու թեանը, կարճատեսութեանը, պետական դաւաճանութեանը:

Մինչև պատերազմը վերջանալը, թաւում էր թէ կառավարութիւնը վախենալով մի գուցէ Կովկասում հայկական շարժում սկսելի, զրգուց թիւրքերին հայերի դէմ, որպէսզի հայերը ժամանակ չունենային քաղաքացիական կեանքի պահանջներով զբաղւել, և իսկապէս այդ տեսակետով կառավարութիւնը հասաւ իր նպատակին, բայց խաղաց մի կրակի հետ, որ սկսում է իրեն ևս այրել. . . . Հակահայկական այս արիւնոտ քաղաքականութեանը այժմ միանում են և օտար կապիտալիստների հայահաւած դաւերը— դուս բըլը արդիւնաբերական շրջանից հայ աշխատաւոր դասակարգը և հայ կապիտալ. . .

Կառավարութիւնաբերութիւնը կանգնած է, որովհետև հանքերի մեծ մասը այրւած, փչացած, աւերակ են դարձած. անվնաս մնացածները պատկանում են 3—4 օտար ֆիրմաների: Կառավարութիւնաբերողները ժողովի գումարւելով՝ մեծամասնութեամբ որոշեցին գործի չը վերսկսել մինչև կառավարութիւնը կեանքի և ինչքի ապահովութեան դրական միջոցներ ձեռք չառնի: Այդ ժողովում օտար ֆիրմաների ներկայացուցիչները մեծամասնութեան որոշման չը յարեցին ու բոլոր կողմնակի տեղեկութիւններից երևում է, որ նրանք աշխատելու են օգտւել առիթից՝ հայ կապիտալը դուրս բըլելու համար:

Գեն. Ֆարգէէվ քանիցս յայտնել էր մանաւանդ Բալխանիի վերաբերմամբ, թէ «մեք անմիջական խիստ միջոցների չենք կարողանում գիմել, որովհետև բաւականաչափ ուժ չունենք, որ թիփիխից ձանապարհւած ուժը հասնելիս՝ թիւրք գիւղերը (Մաբուռնջի, Բալխանի, Բամանի Զարբատ) քար ու քանդ պիտի անենք»:

Հասաւ զօրքը, բայց ոչ միայն այդ խոստումները չը կատարեցին, այլ սկսեց մի հայաձանք կենդանի մնացող և դեռ քաղաք չը փախչող հայերի դէմ: Այդ զօրքի հըրամանատար Սվետլովը քանիցս յայտնեց, թէ Բալխանիում համարի (պարսկաստանցի) և հայ բանուր չը պետք է մնան Ռւրեմն մնալու են տեղացի թիւրքեր և ռուսներ:

II

Սեպտեմբեր 4.

Գեներալ Սվետլովը, Բալխանիում է ապրում և միշտ շրջապատւած է թիւրքերով. պատահած հայերին յայտնել է, որ ո՛չ վարչական և ոչ մշակ դասակարգի հայ անձնաւորութիւններ չը գան Բալխանի, որովհետև նրանց

կետները ապահոված չէ, որ կան ռուսներ և տեղական թիւրքերը, որոնց միջոցով կարելի է աշխատանքը վերականգնել:

Գեներալը զազան թիւրքերի ձեռքը սեղմելով, շնորհակալութիւն է, յայտնել նրանց հաւատարիմ հպատակային զգացումները և գործողութիւնների համար, որովհետեւ նրանք ասել էին, որ հայերի հետ նրանք ընդհարել են միակ այն պատճառով, որ հայերը իրանց առաջարկել են պետութեան դէմ ապստամբել:

Վլետովը շատ մեղմ կերպով պահանջել է թիւրքերից պետութեան լինելը բայց նրանք մերժել են և տասն օր ժամանակամիջոց են խնդրել, որին զենեղալը համաձայնել է:

Այս բոլոր իրողութիւնների հանդէպ՝ արդիւնա երազներ թիւրքերը պատգամաւորութիւն ընտրեց, մասնակցութեամբ Նօբելի ներկայացուցչի, որ զնայ անմիջապէս փաստերը յայտնի գնն. գուբերնատորին: Երեկոյեան ժամը 6-ի մտերքը պատգամաւորութիւնը լուր ասեց թէ գնն. գուբերնատորը անմիջապէս հեռագիր է ասել (տասն օր է որ Բալխանիի հետ հեռախօսական յարաբերութիւնը ընդհատուած է) գեներալ Վլետովին, որ հայերին և պարսկահպատակ թիւրքերին չը հալածի և տեղական թիւրքերին երես չը տայ: Սրանից անմիջապէս յետոյ լուր հասաւ և ստուգեց, որ գնն. Վլետովը հայ զինուորներին զինաթափ անելով, թեմուրկան Շուրայ է ուղարկում:

Ուստի, անհերքելի փաստ է, որ այժմ աւելի համարձակ կերպով քան փետրարին, տեղական իշխանութիւնները, կատարելապէս անձնատուր եղած թիւրքերին, հայերի դէմ արմատական հայածանքի են դիմում: Տեսնելով որ զենքի ուժով հայերի դէմ ճակատ առ ճակատ կանգնելը դժուար է և այդ պարագայում զուցէ թիւրքերը աւելի են կտորուտ, տեսնելով որ կտորածի սպառնալիքներով, մարդկային զոհերով հայերը տեղի չեն տալիս, ներկայում և ապագայում անտեսապէս քայքայելու միջոցների դիմեցին, այն է՝ հրդեհը ու արդիւնաբերական շրջանից արտաքրումը:

Նախորդ օրը, երկու պրիտաններ միմեանց հետ կուսում են աւարի բաժանման աւիթով և իրար դէմ զանգատուում են: Այդ գանդատի վրայ նրանք խուզարկուում են և երևան է դալիս, որ դրանք կազմել էին մի ահագին առաջակային շայկա և հարուստ աւար են վերցրել: Գրանցից մինն է զինուորական սպայ Մամեդովը՝ որ ամիս 20-ին և 21-ին փողոցներից փախչող և ապստամբ առող հայերի վրայ կրակել:

Ամեն անգամ, երբ հակահայկական մի գործ է կատարուում, կամ իրքական ուժի ուժերի դէմ աշտուութեամբ վերաբերմունքի մասին դիմում է լինում գնն. գուբերնատորին, ինչոպիսի հայերին զինաթափ անելը, թիւրք հրատակների անպատիժ թողւիլը, — գնն. գուբերնատորը կամ պատասխանում է թէ թիւրքերի դէմ գործելու համար բաւականաչափ ուժ չունի, և կամ յայտնում է, թէ իրա հըրամանները և կարգադրութիւնները ճշտութեամբ չեն կատարուում, թէ համապատասխան ստիկանական և զինուորական ծառայողներ չունի, թէ եղածներին փոխարինողներ չը կան և այլն:

Բայց թէ քաղաքում և թէ Բալխանիում, գնն. գուբերնատորի, գնն. Վլետովի, պլեյմեյստերի բնակարաններն ու պաշտ նստունները դանակելով թրքական շրջանում, գիշեր ու ցօրեկ ընթացումով թիւրքերով՝ միայն նրանց են լուսում, նրանցից են ստանում... նրանց են ապստ մուսը տայիս:

Շարունակուում են երկու կողմից անհատական սպանութիւնները, այժմ լսնջալով և ոչ գնդակով: Հայի պանուրթեան ժամանակ ստիկանութեան կողմից ոչ մի շարժում, ոչ մի պաշտպանութիւն, իսկ թիւրքի վիրաւորման և սպանութեան պարագայում, — զոքը, ստիկանութիւն տակն ու վրայ են լինում, տներ, մազապիներ են խուզարկուում, շարք ու փշուր են անուում, փակասական ահաբեկչին գրտնելու, ձերբակալելու համար:

Գրութիւնը շատ ծանր է. զույգ երբէք հայութիւնը սպախի ճգնաժամի օրեր չէ ունեցած: Աթենքից մինչև Բելգրադիոն, Բսփորից մինչև Արարատական, Սև ծովից մինչև Ասպետան ափերը, Եփրատից, Երասխից մինչև Աւար գետը՝ հայութիւնը հոգեվարքի ճգնաժամ է անցկայցնում:

Ճշտ է, այս անգամ հայը պատմական ոչխարային ժողովուրդը չէ, կտորուում է, բայց և կտորուում է, բայց և այնպէս այդքան բազմադիմի թշուառների դէմ — մին մենակ է... Ոչ մի տեղից ոչ մի համակրութիւն, ոչ մի օգնութիւն...

Տեսնենք դէպքերը մեզ ո՞ր կը ասնին...

III

Վերջից վերջիով, շատ լաւ իմանալով, որ յարձակողները թիւրքերն են և տուժողը՝ հայերը, — այնուամենայնիւ միշտ արդարացնում է թիւրքերին, իբրև հաւատարիմ հպատակների: Արարատից, հայ պատգամաւորութիւնը շատ է աշխատել — փաստերով, ամբողջ պատմութեան փորձերը առաջ բերելով — համազել նենգամիտ փոխարքային, բայց սպարդիւն: «Ես կարծուում եմ, այնուամենայնիւ, որ մեզաւորը հայ յեղափոխական կոմիտէներն են, որոնք թիւրքերից աւելի լաւ են զինուած», — ասել է նա:

Ծ Ո Ւ Ծ Ի Ա Յ Ը Ն Գ Կ Ա Ր Ո Ւ Ս Ը

Հուլի, 7/20 սեպտեմբեր.

Հտապով հաղորդեմ ձեզ մի բանի կցկտուր տեղեկութիւններ:

Պատրաստուած ընդհարումի աւիթը տւին թիւրքերը՝ սպանելով ռուս Լուսնակինին և երկու հայ բանուորներին, որ ակնատես էին այդ սպանութեանը:

Այս դէպքից երկու ժամ անց՝ թիւրք ստիկանապետը մտաւ հայոց թաղը և խուճուցի տան մօտ կրակ բացեց հայերի վրայ: Նրա հետ միասին սկսեցին կրակել մի բանի թիւրքեր ևս: Սկսեց խուճապը, որի միջոցին հայերը ճամբին պատահած թիւրքերին էին սպանում, իսկ թիւրքերը ձեռքերն ընկած հային: Հուտով երկու կողմերը ամբացան իրենց դիրքերում և սկսեց կանոնաւոր հրացանաձգութիւն: Թիւրքերը խմբովին ջարդուում էին մերոնց միահամուռ զալպերից: Եթէ չը լինէր հրդեհը, մեր աղողութիւնը մեծ էր: Այստեղ հարկ է մեզ ցաւօք սրտի արձանագրել, որ այդ հակայական հրդեհի միջոցին հայ սրիկանների խմբեր ևս մասնակցում էին հայ տների կողոպուտին, մոռանալով ինքնապաշտպանութեան հրատապ խնդիրը:

Հինգ օր տեց հրացանաձգութիւնը, որի միջոցին մեր կորուստը եղաւ 40 մարդ սպանած, 68 հոգի վիրաւոր: Արցրինք և մեր թանկագին Մ արգար ժ ամհարեանին, մեր անխնջ պրօպագանդիստ զինուորին: Թիւրքերի կողմից սպանուածներին հաշուում են 5—600: Նրանց շարքերը հետզհետէ ստւարացան շրջակայ թիւրք գիւղերից արշաւող խուճանով օրը եկել էր օգնութեան:

Սպանած թիւրքերի գրպաններից հանած են թղթ թերթ, որոնցով հաստատուում է, որ թիւրքական շարժումը, բացի այլ խառնուրդներից, նաև համիլամական բնոյթ ունի և պիտի ասել կառավարութիւնը աւելի կռանդով գործեց, կուր միջոցին հայերին օգնական ջորք տալով: Գէթ ռուսները այնքան էլ բարեմիտ աչքով չեն նայում այստեղի թիւրքերին: Հրդեհած է քաղաքի լաւագոյն հայ թաղերից մինը: Թիւրքերի մասում այրւած է մօտ 60 տուն, ողորմելի հիւղեր, ի հարկէ: Հայերի վնասը հաշուում են մի բանի միլիոն:

Վերջին օրը տագնապալի էր: Հայերի ձեռքն ընկաւ մի հինգսոթ թնդանօթ, որից օգտւեցին: Երբ անգամ արձակեցին, երկաթի, հարթուկի կտորտանք լցնելով

մէջը, որի հետեւանքը եղաւ այն, որ թիւրքերը բարձրացրին սպիտակ դրօշակը: Պէտք էր տեսնել, թէ ինչպէս այդ զուգամեալ գործիքը ամեն արձակելուց յետոյ սայլից գլորուում էր գետին, որ և ի հարկէ նորից դնուում էին տեղը և կրկնուում արտիլերիական փորձերը: Ռուսները գործում էին իրենց աւերածը թշնամու շարքերում:

Հրդեհի ժամանակ շատերը ապաստանել էին տեղական զորանոցը: Բժիշկներ և օգնականներ կան, որ ապրում են վրաններում: Հայ հիւանդանոցի ու վիրաւորների կեանքը ապահով է, իսկ թիւրքերն իրենց թաղում թափուած են գետին վրայ, ջարդուած ոսկորներով, կարօտ անդամահատութեան և անխնամ կոտորուում են:

Մօզն ու շքաւորութիւնը, աղէտի արբանեակները, արդէն բարձրացրել են գլուխները մեր կիսաւեր բաղբուր: Շատերը, որ երէկ հարուստների շարքումն էին, այժմ կարօտ են օրապահակի:

Հրջականներից հասած լուրերը խառն են, յուզիչ: Մի նշանաւոր ձեկատամարտ է տեղի ունեցել Ասկերանի հովտում. մեր խմբերը վարանդայից և ուրիշ վայրերից գրաւել են բերդի աւերակները և մի քանի օր շարունակ ջարդել ու յետ են մղել հազարաւոր թիւրքերի գրօշը, որոնք մեծ ձանապարհով արշաւելիս են եղել դէպի Շուշի, թիւրքերին օգնութեան: Այդամ և մի քանի այլ թիւրք գիւղերում էկզէկուցիա է նշանակուած, որովհետեւ այնտեղ դեռ, շարունակուում են կողոպուտն ու սպանութիւնները թիւրքերի կողմից: Մօտ ժամանակներս թիւրքերը յարձակւել են պոստի վրայ, բայց սուրհանգակը թիւրքերի վրայ կրակ բաց անելով և առաջներն էլ մի հակ նետելով՝ կարողացել է դուրս պրծնել ու ազատել պոստը:

ԱՐԻԻՆԱՇԵՂ ԿՈՒԻՆԵՐ ԶԱՆԳԵՉՈՒՐՈՒՄ
(Ավանատնի մկարագիրը)

Պիտի աշխատեմ, ինչպէս հրահանգել էիք, ամենաճիշտ տեղեկութիւններ ապր պիտի աշխատեմ պատմել միայն այն, ինչ որ տեսել ու լսել եմ, առանց ինձնից օր և է բան աւելացնելու կամ գեղեցկացնելու:

Յունիսի 10-ին, թէ 15-ին, չեմ յիշում, Մուրադը ինձ կանչել էր իր մօտ, մերձակայ գիւղը. տեսնեցի իր հետ: Խորհում էին իւրաբանչիւր գիւղից 5 զինուոր վերցնել իրենց հետ և Գ Ե օ մ թ ի գիւղին օգնութեան գնալ: Միև գիւղերի մասին որոշ չէ գիտեմ, բայց մեր գիւղից 6 հօգի յանձնառու եղան գնալ. ափսոս միայն, որ ցանկացողներից ոմանք զէնք չունէին, ոմանց զէնքերն էլ լաւ չէին: Մուրադը իր խմբով ու երեք վալադով տնցաւ Գեօմրի: Խմբի մէկնելուց մի օր առաջ մէկ հարիւրեակ կօշակ, պրիստաւը իր հետևորդներով և մեր գիւղից մի վալադ շառագեցին նայն Գեօմրի գիւղին օգնութեան: Կօշակը և պրիստաւը հասան յարձակման ամենաառ միջոցին, մի այնպիսի ժամանակ, երբ արդէն հազարաւոր թիւրքերով շրջապատուած էր գիւղը: Մեր գիւղացի վալադը, երբ հեռուից նկատուում է կռիւը, իսկայն դիմում է հրամանատարին, թէ «թիւրքերը պաշարել են գիւղը և մի քանի բազէից կօկուի ջարդը» հէնց այս խօսքի վրայ հասնում է պրիստաւը, Շախուար բէկ և յայտնում. «Ո՛չ, այդպէս չէ, դե ոչ թէ

կռիւ է, այլ Գեօմրի գիւղի հայերն են, հրացանային վարժութիւններ են անում» Իհարկէ, պրիստաւի խօսքը աւելի ընդունելի է լինում, քան հայինը: Վալադ հայը, անհանգիստ, երբ մի քիչ էլ մօտենում են, կրկին դիմում է հրամանատարին, բայց պրիստաւը կրկին առաջ է գալիս ու հակառակ խօսում: Երբ հրամանատարը զննանում է վալադ հայի աղերսանքին, պրիստաւը ճարհատեալ, առաջարկում է դատարկ զալպ տալ, որից յայտնի լինէր, թէ ովքեր են: Նրա խօսքը կրկին ընդունելի է լինում: Կօշակը կրակում է դատարկ, թիւրքերը իւկոյն նկատում են և սկսում են փախչել կօշակը այլևս չի հետևում և կռիւը դադարում է: Կօշակը մտնում է գիւղ, թէ ի՞նչ կորգագրութիւններ է անում, ինձ յայտնի չէ. միայն, պրիստաւը մի երկու օր մնալուց յետոյ, վերադառնում է Մազրա: Նրա դուրս գալուց մի քանի ժամ անցած՝ թիւրքերը կրկին յարձակւում են գիւղի վրայ և քշում տանում են գիւղի նախիրն ու ոչխարը... Շատ պարզ է ուրեմն, թէ ի՞նչ դիրք է բռնում պրիստաւը և որպիսի ցածուութեամբ թիւրքերին սովորեցնում է յարձակման ժամանակը: Պրիստաւը ինքը շատ լաւ հասկանում էր, որ եթէ նախիրն ու ոչխարը քշեն, կօշակը չի հետևի քշողներին: Այդպիսով նա ուզեց սովամահ անել Գեօմրիում հաւաքուած հայերին (շրջակայ գիւղերից էին հաւաքւել):

Սովամահը ապրելու համար ամեն միջոցի կը դիմէ: Խուճաք արդէն հասած է լինում, ժողովուրդը քաշալերում է. յարձակում են խանի ոչխարների հօտի վրայ և քշում բերում են ոչխարը: Թէ ի՞նչպէս են տեղի ունենում ընդհարումները, այդ մեր հերոս Մուրադը կը պատմէ: 1905 թւի յունիս ամիսը Մազրա գիւղի համար յաւէտ յիշատակելի դարձաւ. — այդ ամսում յուսահարուեց, քաշալերուեց, զարկեց, զարկեց ու վերջը ընդհատուեց իր ամբողջ ուժով... Իհարկէ, որչափ հնարաւոր է հարիւր տուն ունեցող մի գիւղի: Այդ ամսում թիւրքերը իրենց սովորութեան համեմատ, շատ, սպառնալիքներ կարդացին: Օր նոր՝ լուր նոր: Մէկ օր նախիրը պիտի քշէին, միև օր՝ ոչխարը, երրորդ օրը գիւղի վրայ պիտի յարձակէին, կանանց ու երեխաներին պիտի սպանէին, տները աւերակ պիտի անէին, վրանները այսինչ կամ այնինչ տեղը պիտի խփէին և այլն:

Ցեղերից ոմանք էլ այլ կերպ էին խօսում, բոլորովին հաշտ լեզու էին բանեցնում: Այսպէս էր ամսի սկզբի խօսակցութիւնը: Առաջին փորձը եղաւ Շաղաս գիւղի նախիրի վրայ. յարձակեցին, հարայ ընկաւ գիւղերը, Շաղաս և Մազրա իրար շատ մօտ են: Սկզբում յայտնի չեղաւ, թէ ում նախիրի վրայ են յարձակել: Մազրեցիին դուրս թռաւ. իր ապրուստը, յոյսը, իր կաթը մածունը, իւղը, — բոլորը կորած էր: Պետք էր փրկել: Հարայը հասաւ, թիւրքերը փախան, թողնելով բոլորը, բացի մի կովից, որ յաջողեցին փախցնել: Հաւաքուեցան հարայի հասնողները, խորհուրդ արին. արժէ՞ արդէօք մի կովի համար կռիւ անել: Ո՛չ. մենք կը բողբենք կառավարութեանը, ասացին ամեն կողմից: Ասացին ու դարձան դէպի գիւղ: Նախիրը և կովը շաղասեցուն էր:

Անցաւ մի քանի օր, — կրկին հարայ, կրկին յարձակում շաղասեցու նախիրի վրայ, այս անգամ բոլորովին անաջող: Ելի մի երկու օր, էլի յարձակում, — այս անգամ երկու ոչխար տարան: Ժողովուրդը սկսեց ներել ու սաստիկ բողբել: Բայց ո՞վ գիտէ, քանի ամսից պի-

տի լուեր բողոքը... Յունիսի 15-ն էր, թէ 16-ը, մի քանի թիւեր ձիւտորներ, Մազաթի արեւմտեան դաշտով անցնելիս, տեսնում են պահանջներին, որոնք Տրակում են տաւարի վրայ: Թիւրքերը մտածում են նախ պահանջներին զինաթափ անել և սպանել, ապա տաւարը քշել: յարձակում են պահանջների վրայ: Գիւմարութիւնը լինում է յանդուգն ու համարձակ. թիւրքը գողում է «անձնատուր» և հրացանը ուղղում. պահանջը ծունկ է չորում և սողում. «Մեղք ես, թող և ուղիղ ձաճովդ գնա. եթէ ոչ, չեմ խնայիլ»: Մինչ թիւրքը բերդան հրացանը ոտի է քաշում, հայը կրակում է և գրորում մէկի ձին: Թիւրքերը խուճում են իրար. մինչ այս մինչ այն, հարայը գիւղն է հասնում: Գիւղացիք կրկին դուրս են թափում: Թիւրքերը մի կերպ աջողում են վերաւոր ձին տանել: Մութը վրայ է հասնում ամեն բան լուում է մթութեան մէջ 2 է պարզում, թէ ո՞ր ցեղից են լինում յարձակողները: Այս անգամ Ուսուբուլու կոչւած ցեղից են դուրս գալիս մի 10—15 ձիւտոր և յարձակում են դաշտ հերկողների վրայ, ասելով. ինչո՞ւ էք մեր դաշտերը հերկում: Հայերը պատասխանում են, «20—30 տարի է, ինչ մենք այստեղ վարում ենք, ի՞նչպէս կրկին ձերը»... Թիւրքերը, մեզ անյայտ պատճառով, թող են վերաբերում նրանք հեռանում են գիւղացիք իրենց արօրները բերում են ներքև, դրանից յետոյ սկսում են վնասել կանաչ արտերը, ոչխարն ու տաւարը լցնում են արտերի մէջ, կերցնել փչացնել են սկսում գիւղացու ապակէնը, որից պիտի գոյանայ տէրունական հարկը իր հագնելիքը, ուտելիքը, ապրուստը: Հէնց այդ օրերը եկաւ գաւառապետը ժողովուրդը, զայրացած թիւրքերի այդ վարմունքից, գաւառապետին բողոքելու վճիռը տւեց:

Բողոքեցին: Գաւառապետը փոխանակ լսելու գիւղացիների բողոքը, հայհոյեց նրանց՝ «բաւական չէ՞, որ թիւրքերի արօտատեղերը վարել էք, դեռ եկել նրանցից գանգատում էլ էք, կը տեսնէք, թէ ես ձեզ ինչ կանեմ»: Սպառնաց գազանը: Հէնց այդ միջոցին գիւղացիներից մէկը խոնարհաբար ներկայացաւ իրեն ու ասաց՝ «մենք մեծ ուրախութեամբ կընդունենք, կպատւենք մեր հիւրերին, միայն խնդրում ենք զսպել ձեր կողակներին, որ անպատիւ խօսքեր չասեն մեր հարսերին... Կրակը բողոքեց, գազանը մոնչաց, խռովեց: Մազրեցոց յանձնեց թիւրքերի ձեռքը, հաւաքեց կողակները, ինքը իր շախտարով վերկացաւ ու գնաց, անիծելով մազրեցիներին, որ խոնարհաբար գանգատուել են, որպէս իրենց ազատարարին: Ահա գաւառապետն էլ այսպէս ցոյց տւեց իր գոյնը: Հաւատը փոխեց, այս անգամ գնաց դէպի թիւրքերը, թէ ի՞նչ խօսեց իր հաւատակիցների հետ, չգիտենք. միայն երբ վերադարձաւ Ղարաբեղիսա, անփրկապէս ձերբակալել տւեց մեր տանուտէր նահապետին և կողակների դէմ գանգատող Բախշուն: Տանուտէրին հարցրելին ինչո՞ւ էք թիւրքերի հողերը վարում: Ձերդ մեծութիւն, ես այն ժամանակ տանուտէր չէի և եթէ հողը նրանցն է, թող մնայ իրենց, դրա համար գիւղացին ոչ մի ընդդիմութիւն չի ասում: Տէրունական պաշտօնեաները թող քննեն և տեսնեն. թէ ում որ պատկանում է, թող նրան մնայ: Մանրամասնութեաց մէջ չեմ մտնում, այստեղ ոչ մի հողային հարց չկայ և եթէ կայ էլ թող օրինական կարգով քննիչ գայ ու որոշէ սահմանը և զրանով կվերջանար: Ինչո՞ւ գաւառապետը

այդ չարաւ... Այստեղ էլ պարզ է, որ նա չուզեց հարցը խաղաղ կերպով լուծել: Գուցէ նա գիտէր, որ թիւրքերը մեզ վրայ պիտի յարձակէին և նախապէս ինքզինքը արդարացնելու համար՝ հողային հարց մէջ բերեց: Կըրկնում եմ, հողային հարց չկայ, զուտ ազգային մի անվերջանալի հակառակութիւն է:

Տանուտէրը և Բախշին բունեցին, կողակները հեռացան: Թիւրքերը քաջալերելով, խորհուրդ կազմեցին: «Ջհաթ» դուրս թուաւ ուսմիկ, վայրենի, մոլեռանդ ամբոխի բերանից: Հաւաքեցոն բոլոր ցեղերից, — Մուրթուզը իր աւազակային խմբով, նասըրուլահ բէկը, բոլոր արիւնարբու գայլերը, հաւաքեցան նաև շրջակայ թիւրք գիւղերից: Ոչ մի ցեղ անմաս չը մնաց: Ինչպէս յետոյ յայանեց, իրենց որոշումն էր՝ աւարի մատնել Մազա և Շաղատ գիւղերի ամբողջ գոյքը: Յիշե՛ք մի քանի ցեղերի անուններ, որոնք պատճառ են դառել յուլիսի 25-ի թալանի ու կոտորածի.

1. Ուսուբուլու՝ գրուխ ունենալով Ալիքեղի Աբաս օղլին:
2. Միրզան աղլու՝ Մամադ մոլլա հասան օղլի, Իրզաղուլի Հասանղուլի օղլին:
3. Ահմադալլար՝ Աբդուլլահ Ազիմ օղլին, Սալման Միրզա օղլին:
4. Ղալալար՝ Յիւսան Մուսա օղլին, Ալլահվերդի Ադամ օղլի:
5. Մոլլա Մահալալալու՝ Ալլահվերդի Իբրահիմ օղլին, Մոլլա Աբասս Իբրահիմ օղլին:
6. Ալվերդիլար՝ Սարի հաջի Սարը օղլի, Ասկար խան Մուրադ օղլի, Մոլլա Աշիմ հաջի Բաբաբեղի օղլի:
7. Հաջալալա՝ Ալմուրադ Ղարաբեղի օղլի, նասըրուլահ բէկ Բեհարիմ բայ օղլի:
8. Աբսուլու՝ Մրզաղուլի բէկ Աբաս բէկ օղլի, Ղահրաման բէկ Նաջաֆ օղլի, Փարման Աբաս օղլի իր եղբայրներով: Ջաբրայիլու՝ Աբդուլահ բէկ: Արիբուլու՝ գիւղացիք և յայտնի աւազակ Մուրթուզա Բեյբալայի նոզի օղլի: Բախշալի Բեյբալայի Աբաս օղլի, Մամադալի Բեյբալայի փիրի օղլի, Ալիհիսէին Բեյբալայի Փիրի օղլի: Աւազակներ՝ Աղա Սամանդ օղլի, Արդուլազիմ Ալմուրադ օղլի: Յիշե՛ալ Արդուլազիմ Ալմուրադ օղլին Ահմադալլար ցեղից է: Ահա այս ցեղերը իրենց պարագլուխներով կազմ և պատրաստ սպասում էին յարմար առիթին...

Յունիսի 25-ը, իրենց կարծիքով, տւեց այդ առիթը, յարձակեցին միաժամանակ Շաղատու և Մազրայի վրայ, բռնեցին տարան շաղատեցոց 92 գոմէշ, իսկ մազրեցոց 500 գառ 12 եղ 30 խոյ և մի հատ աւրու գոմէշ: Գիւղացիք վայրկենապէս սթափուեցան, երբ հարայը հասաւ գիւղը: Անօգուտ անցաւ բանտից ազատուած տանուտէրի խօսքը: Ամեն մարդ իր գառն էր փնտրում, առանց որի ցամաք պիտի մնար: Կային այնպիսիներ, որոնք աշնանը գառը պիտի ծախէին տէրունական հարկը վճարելու... Այս բոլորը գիւղացու մտքով անցաւ, ոչ որի նա չը լսեց, վայրկենաները թանգ էին, պէտք էր վերադարձնել գախներն ու գոմէշները և Բայց ինչպէ՞ս: Մի՞թէ աւազակները հեշտութեամբ յետ կը տային: Այլևս չը մտածեցին երկար: Որը հրացանով որը փայտով, որը կացնով — դուրս թուան գիւղից: Թուրքերը երբ տեսան գիւղից դուրս թափող ժողովուրդները, կրակ բաց արին. վերաւորեց գիւղացիներից վրդին, կրակ բաց արին. վերաւորեց գիւղացիներից մէկը: Կրակը սկսեց երկու կողմից: Թուրքերի մօսին հրացանի պայթիւնի ձայնը, գնդակների վզոցը հասաւ շրջակայ հայ գիւղերի ականջին: Մարտուռ պատեց բոլորին: Մազրա գիւղը կոտորածի ենթարկեց, — ամեն

օք այս էր գուշակում: Լացն ու կածը սկսեց: Շաբաթ օր, ժամի 12 էր: Ամեն օր իր դիրքը մտած,— Էկէր աշխատում էր իր սեփական ապրանքը յետ խլել: Միւր իւր լուծը յետ չը առաւ: Ինչպէս վերը յիշեցէ, կռիւր սկսեց յունիսի 25-ին շաբաթ ցերեկայ ժամը 12-ին: Այդ օրը առաւօտեան Մուրադը իր խմբով իջաւ Բեր գիւղը: Կռիւր սկսելուն պէս, գիւղի նորահազմ զինուորներով նա գրաւեց յարմար դիրքեր: Կռիւր առաջին բազմակիսի նորահազմ զինուորները դիրքերից Էկէր թողին և դրանով վաճառեց Շաղաթում եղած կոզակները դիրքը (որոնց հետ կային նաև մագրոցիներ): Այդ երկու դիրքերի մարդիկ բանեցին մի այլ դիրք, որը ֆուսսբեր եղաւ Բեր: Մուրադի խմբի անգամներէց երեքը Բեր կողմն անցան, այդտեղ կրկին երկու մասի բաժանեցան. յաջողեցին ձեռք բերել մի մի դիրք, որով յաղթումիւնը Բեր կողմն անցաւ. թիւրքերը սկսեցին փախչիլ, այս անգամ Մուրադը չը կարողացաւ համբերել, դուրս թուաւ դիրքերից, խլեց մի սարիչ դիրք, որից յետոյ սկսեց թիւրքերի կատարեալ ու կանանուրը փախաւ: Մուրադի օջ թուի վրայ գաղնուց խումբն էլ դուրս եկաւ դիրքից, սկսեց հաւաքել թիւրքերէ արանքը, իսկ ձախ թուիսը և իր մօտ գտնուողները յարձակեցին վաճառների վրայ:

Մուրադը իր խմբով հրձուած էր վաճառների վրայարձակուց գիւղի նորահազմ զինուորներէ վրայ, որոնք իրենց արծուի թեւերէ պաշտպանութեան առկ էին առել ամեն բան... և յետ յանկարծ զինուորական փողի արձագանքը բոլորին թուալեց: Մարի գագաթին երկու ձիաւոր ետեւացին: Հայ դիրքերից կրակ արին, որից ձիաւորները փախան. այս անգամ սուգին կերպով լսեց փողի ձայնը և կոզակները խմբովին երեւցին նոյն գագաթին: Հայերը յետ քաշեցան, թողնելով թուրքերի տաւարը, որովհետև կոզակները Բեր թուրք կարծեալով, սկսեցին կրակել, և վերապահեցին մի հագի: Կռիւր դարդարեց 6 ժամ յետոյ Այժմ անում է ինձ այստեղ պատմել զգանաճներէ և վերաւարածներէ մասին: Մեզինց վերաւարած են 5 հագի, Էկէր՝ ծանր, միաները՝ բոլորովին վին թեթև: Ծանր վերաւարը Այլու գիւղացի Գասպար Աւագանը: Վերաւարած է ձախ աղբից, մօտին գնդակէջ, աղբը սկզբը կտարած է: Գիւղում կանանուրը վերաբար չը կայ: Բժշկութիւնը կատարում է պատմեցին ձեռքով: Կռիւր 3-րդ օրը եկաւ գաւառագետը իր խոտակցութիւնը կրկին հողային հարցի շուրջըն էր. երբ գիւղացիք պատասխանում էին, թէ ոչ մի հողային հարց չը կայ. այլ թէ, որովհետև մեր գագաթ, եղե ասբան, մենք չը կարողացանք համբերել, գնացինք վերագործներու սկսեց կռիւր: Գաւառագետը պատասխանեց. ես ձեզ շատցի՞ մի գնաք. գիւղացիք լուծում է, իր ներքին գրգռող պահով իր մէջ: Ինչ անէ: Հողացիք ետև պահեստի զինուորներին, ցուցակագրեց և գնաց թուրքերի մէջ. սահմանագլխում Էկէրից Բեր գիւղացիներէց երկուսին, թէ ինչո՞ւ էք այսանքերը վարել: Գիւղացին ի՞նչ անէ: Թիւրքերի միջից կրկին վերագործում է, այս անգամ կատարած է փրփրած, թէ ինչո՞ւ էք օրով կարեւր նրանց կանաց: Ինչո՞ւ էք նրանց թալանել. բերեք թալանը յետ աւել: Գաւառագետնում են, մենք թալան չենք արել. էին չենք կտրել, բացէ գիւղամբ իրենք են արել: Այս անգամ զգոց մի շաբթ անուններ կարգալ և այն-

պիտի անձանց անուններ, որոնք Բագու էին գնացել: Դրանց մասնել են թուրքերը: Ի վերջոյ գատեց 6 հագի, ձեռքակալեց նրանց և իր հետ բերաւ, թողնելով այնտեղ պրիստաւին և 36 կոզակ:

Աւագան էր Շախսուարը, առաջարկը իրենն էր: Կատարեց իր դիւային ծրագիրը, երկու խաղաղ միտակապարտ ժողովուրդ ձգեց իրար. ոչ ոքը պրտոր է, պէտք է ձուկ որսալ, — ահա իր սատանայական միտքը. «ես ձեզ պիտի հաշտեցնեմ. ընդհարումները կաւելանան, երկու կողմից էլ կը փախանք... արդեօք ինչէ՞ր կան այս խօսքերի առկ: Շրջակայ գիւղերից հաւաքեցին հայ, թուրք, միամիտ ներկայացուցիչներ՝ Շախսուարի հրամանը կատարելու: Գայլերը հաւաքեցին, խորհուրդ արին հրաման արձակեցին. մագրոցին 1500 մանէթ տայ՝ թուրքերին տարած տաւարը փոխանակելու: Եզը յղի էր, ծնաւ մի հորթ բերեց... որովհետև Շախսուարն էր ստողը, պէտք է հաւատալ, մանաւանդ պէտք է ընդունել, եթէ ոչ ինքը կը հետանայ և գործը վատ կը լինի: Խեղճ մագրոցի. արտերդ փչացնեն, գառ, եզ, խոյ, տանն, պատիւդ ոտնտաակ տան, դու էլ դեռ 1500 մանէթ տաս... ահա թէ ի՞նչ է մտածում անել քեզ քո պրիստաւ Շախսուարը... Սրտաբարները պատմելու համար, հարկաւոր է անվերջ համբերութիւն: Իր կինը պահում է վրանարանից ցղերի մէջ: Գուցէ իր կնոյ համար փրկանք է ուզում, Շախսուարը գիւղացուն խնդրելու լաւ ժամանակն է գաել: Գիւղացու ամբողջ ձմեռայ պաշարը դաշտն է, խոտը հնձելու ժամանակը անցել է. դեռ չէ հնձել, ազատ դաշար չէ կարող դուրս գալ: Շախսուարը կաշառք է ուզում. ո՞ր և ո՞ւմ դիմէ: Գիւղի ձեռնհաս մարդիկ ձեռքակալած են: Պէտք է միջոցներ ձեռք առնել այս պրիստաւին այստեղից հեռացնելու: Գիւղը ոչնչանում է, թէ նիւթապէս և թէ բարայապէս: Թուրքերի կողմից՝ սպանած և վերաւար՝ մօտաւորապէս հաշուում են 50 հագի:

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ ԶԻՎԱՆԾԻՐԻ ԳԱՒԱՌՈՒՄ

(Դեպքերի սկզբնաւորութիւնը)

I

Վաճառ գիւղի մօտ գտնում են նոյն գիւղի մի տաւարածի գիւղը՝ զլեւտաւած: Լուր է գալիս. թէ հայի գլուխը տանում էին իրենց հետ այդ միջոցին քաղաք թաւաքամները: Չինւած վաճառքից հետո՞ւմ են քաղաք յետեւից, խաղաղութիւն են բռնեցը և յիշուի գտնում են տաւարածի գլուխը նուալի մէջ գցած: Այստեղ կռիւ է սկսում հայերի և թաւաքամների միջև: Խոյից և եթ հայերը կտրում են Սաբաթգետակ կիցը և թայլ շեն տալիս անցած թիւրքերին սարից իջնել: Երկու օրուայ ընթացքում, սկսում պատահում է հայը թիւրքին, թիւրքը հային գետին են թաւալում. Վաճառից մինչև թու գետակը հայերը թիւրքերից քուտ-բերում են հարեւարաւոր տաւար: Այդ ժամանակ Աղբամի կողմերից ներկած թիւրքերին օգնութեան են կալիս բազմութիւն ձիաւորներ, որոնց առաջը կտրում են կոզակները թու գետակում, մինչև որ հաւատութիւն է կայանում:

Վերայիշեալ դեպքերի ժամանակ մեծ դեր են կատարում մեր թուրքիկ խմբերը. այժմ գիւղացիներն իրեն աչքով նկատեցին, թէ սրբան օգտակար են թուրքիկները, և սը թէ այն սխալմը, սրբով ամեն մարդ իր գիւղում էր մնում, իր համար էր միայն մտածում: Սուրհանգակները

Հէնց առաջին օրը իմաց են տալիս խաչէնցեաներին, Ջրաբերդ-
ցիներին և դիւլիտանցիներին, որ ամեն մարդ զգաստ լինի:
Այդ կողմերում այժմ ամեն տեղ մարդիկ պատարաստ են
պատահարների դէմ մաքառելու: Սակայն հրահանգւած է,
որ զուր տեղից կռիւ չանեն:

II

Վանքի մօտ պատահած դէպքից յետոյ, ուր մերային-
ները մեծ վեհանձնութիւն ցոյց տւին, թիւրքերը սպանեցին
8 էի 2 ուր ու մ երեք անմեղ հայերի: Մի քանի օրից
յետոյ նոյն տեղում սպանւեց հայերի ձեռքով թիւրքերի
առաջնորդը:

Գրանից քիչ յետոյ Ալքամի թիւրքերը սկսում են
կանգնեցնել անցնող բոլոր հանրակառքերն ու ֆոյտոնները,
թալանում են հայերին և արգելում են նրանց ճանապարհ-
հը շարունակելու: Այս բոլորը կատարուած է փոխ-նահան-
գապետի ներկայութեամբ, որին նոյնպէս թիւրքերը կանգ-
նեցնում են Ալքամում:

Երբ Շուշու ընդհարման լուրը տարածուած է, թիւրքե-
րը ամեն կողմից դիմում են դէպի Շուշի, բայց հայերը
կարելով Ա ս կ ե ա ր ա ն ի կ է ր ճ ր և «խանին բաղը»,
թոյլ չեն տալիս նրանց Շուշի գնալ: Փոխ-նահանգապետին
նոյնպէս արգելում են, սկզբում չը ճանաչելով նրան, բայց
յետոյ բաց են թողնում: Օդ. 18-ին բազմաթիւ թիւրք
ձիւտորներ հաւաքուած են Թ ա ր թ ա ու, և մղկիթում
խորհրդակցելուց յետոյ, մի մասը դիմում է դէպի Շուշի,
բայց կանգ է առնում Ասիեարանի հայ քոյրերի առաջ:
Վճռեցինք մեր «Թուուցիկներին» շարժման մէջ դնել և Ղըր-
կեցիքը պաշտպանելու այն դիւղերը, որոնք դանուած են
տափարակի վրայ:

Քեռանի թիւրքերը առաջարկում են, որ եթէ մենք
պահենք, կը գնան և դաշտաբնակ թիւրքերից հարիւ-
րաւոր տաւար կը դողանան, բայց մենք մերժեցինք, չուզե-
նալով բարդութիւններ առաջացնել:

Ի՞նչ ԴԱՍ ՏԻԵՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Երեսուն, oqunusnu 30.

Դուք արդէն ծանօթ էք թիւրք ժողովրդի և ուուս
կառավարութեան բռնած դիրքին դէպի հայերը: Սակայն
ինչ են անում իրենք հայերը, որոնց գլխին թափւեցին այդ
անսպասելի հարւածները: Անսպասելի ենք ասում, որով-
հետև այնքան միամիտ, անհեռատես էինք, որ անտեղ-
եակ մնացինք, ոչ մի գաղափար չունէինք մի շարժ-
ման մասին, որ երկար ժամանակից ի վեր նախապատ-
րաստուած էր համիտլամականների և ուուս կառավարու-
թեան ստոր ներկայացուցիչների կողմից: Զբաղւած լի-
նելով միանգամայն տարբեր ծրագիրների իրագործումով,
մեր յեղափոխական կոմիտէներն ու գաղափարական
երիտասարդութիւնը անտես էին առել նենգ թշնամուն,
որ գարան էր մտել Հէնց մեր կողքին: Իսկ հայ բուր-
ժուադիան և հայ հասարակութեան պահպանողական
տարրը, որ միշտ հակառակ է եղել յեղափոխականնե-
րին, ազատագրական գաղափարներով տոգորւած երի-
տասարդութեանը, — սովորական ինքնագոհ մեծամտու-
թեամբ նայում էր իրերի դրութեան և երբեք իրեն
չէր թոյլ տալիս մտածելու, որ թիւրքերը այսքան եր-
կար տարիներ հարևաններ լինելով և տնտեսական կա-
պերով շաղկապւած հայերի հետ՝ ձեռք կը բարձրա-
ցնեն հայերի վրայ: Բնաւ: Կա համոզւած էր, որ ուուս
կառավարութիւնը, իբր թէ նախանձախնդիր կովկասի
կուլտուրական զարգացմանը, ոչ միայն պաշտպան չէր
հանդիսանայ թիւրքերին, այլ և թիւրքական շարժումը
հայերի դէմ Հէնց իր սողմում կը ոչնչացնէր:

Սակայն ահա տեղի ունեցան Բագրի փետրուարեան
դէպքերը: Գա մի անսպասելի հարւած էր, որ շանթի
նման զարկեց հայ ժողովրդին. զարկեց և սթափեցրեց:
Հայերը անպատրաստ էին բոլորովին այս նոր անսպասելի
թշնամու դէմ կուելու, բայց և այնպէս ինքնապաշտ-
պանութեան բնազդը ստիպեց կուել և շնորհիւ հայերի
վերջին օրերին ցոյց տւած դիմադրութեանը, թիւրքերը
ստիպւած եղան հաշտութիւն կայացնել: Պէտք էր
տեսնել, թէ ինչպէս հայ բուրժուան, հայ յետադէմը,
փրփուրը բերանին, գրգռւած աղաղակում էր. «Ի՞նչ
են անում մեր յեղափոխականները, մեր հայ տղերքը.
ինչո՞ւ են լուել ինչո՞ւ չեն իրենք էլ թիւրքերին հար-
ւածում»: Այսպէս էին ասում նրանք, որոնք իրենց
կեանքում երկու կողմէ չէին տւել հայ յեղափոխակա-
ններին՝ դէնք գնելու. այսպէս էին ասում նրանք, որոնք
մի քանի օր առաջ տակաւին ձառեր էին ասում Բագ-
րի հայ յեղափոխականների հասցէին, երբ սրանք նախ-
օրօք ինքնապաշտպանութեան միջոցներ էին ուզում
ձեռք առնել մօտեցող թիւրքական յարձակումների
դէմ, սաստում էին, չը լինի թէ կօմիտէները խառնւին
գործի մէջ և առիթ տան թիւրքերին հայերի դէմ
գրգռւելու: Բայց երբ Նալայեանի, Արամեանի այրւած
դիակներն ու հարստութիւնները նրանց յիշեցնել տւին,
որ իրենց էլ կարող էր նոյն բախար վիճակել, նրանք
սթափւեցին և նեղն ընկած՝ դիմեցին յեղափոխականնե-
րին: Դիմեցին յեղափոխական կազմակերպութիւններին,
որովհետև Բագրի դէպքերի միջոցին, երբ չորս կողմը
լաց ու շիւան, փախչող փախչողի վրայ էր, նրանք տե-
սան, որ մի փոքրիկ խումբ հայ յեղափոխական զինուոր-
ները կարողացան կուել համեմատաբար շատ ուժի դէմ,
երբեմն նոյնիսկ անսպասելի յաջող հարւածներ տեղա-
լով թշնամու գլխին:

Մենք համոզւած ենք, որ այսուհետև, չը նայած
վերոյիշեալ դժարութիւններին, մանաւանդ ուուս կա-
ռավարութեան հալածանքներին և խուզարկութիւննե-
րին, մեր ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը ա-
ւելի խանդով կը տարւի, աւելի ինտենսիվ մի գոր-
ծունէութիւն առաջ կը գայ հայ խմբերի համար: Մեր
ամբողջ պատմութիւնը, մեր գլխին եկած վերջին դէպ-
քերը ցոյց են տալիս, որ այլևս ուրիշ ճանապարհ չը
կայ մեր կեանքի ու գոյքի պահպանութեան և փրկու-
թեան համար:

Զէ՛նք, դէ՛նք և ինքնապաշտպանութեան
մարտական խմբեր — ահա թէ ինչ պէտք է լինի
իւրաքանչիւր հայի նշանաբանը: Եւ ուրախալի է, որ
այսօր իւրաքանչիւր հայ, սկսած մեծից մինչև փոքրը,
հարստից մինչև աղքատը, գիւղացին քաղաքացին, ներ-
շնամ է այդ գիտակցութեամբ, այդ հաւատով: Այլա-
պէս չի էլ կարող լինել: Այսօր ասպարէզի վրայ դրւած
է հայ ժողովրդի գոյութեան հարցը, հայի լինել կամ
չը լինելը: Մի՞թէ սրանից յետոյ էլ տակաւին տատու-
նումներ կարող են գոյութիւն ունենալ: Արդեօք այդ
ինքնապաշտպանութեան միջոցների խրոխտութիւնն ու
ինքնիշխան չէ՞ պատճառը՝ որ շատ տեղ թիւրքերը հաշ-
տութեան, համերաշխութեան մասին են խօսում կեղծ
դիմակներով: Խորը համոզւած լինելով, որ եթէ իրենք
սկսեն նորից դէպքերը, այն ժամանակ մի դառն դաս
կը ստանան կուռզիներից:

Հայերը չեն սկսել կռիւ. հայերը չէին ուզում և

մաքանցիկ էր և չէր անցնում Երբեք և ուղի-
 առում ընհարեւել թիւրքը տարրի հետ, ազգայնական-բա-
 ղաբան հոգի մտայն շայքը զբաղած էին այլ ցաւե-
 րով, պատրաստութիւններ էին տեսնում այլ քաղաքա-
 կան հոգիները համար Մակայն թիւրքերը, կարծամիտ
 ղեկավարները թիւրքաբանութեամբ, իրենք սկսեցին մի
 հոգի, որը հետեւեալները պատասխանատուութիւնն իրենց
 մտայն է ընդունում շայքն օտարած էին ընդունելու
 այդ կոնքը և այսուհետեւ երբեք այլևս զենքը ձեռքից
 վայր չէն դնի: Երբ և կառավարութիւնն ուղեց այդ և
 հասաւ իր նպատակին: Կոնքի երկու մեծ ժողովուրդ-
 ները միմեկը քաղաքի և մի խորունկ վիճ, մի անդունդ,
 որը, օձ գիտե, երբ կը ծածկէին Կայն ընկաւ և բոր-
 բոցեւել է մի սոսկալի հրեհ:

Եւստի մի հայ թե՛ղ այժմ համագլխով լինել, որ այլևս
 կոնքի միտք, առանձնապէս ժամանակ չէ այստեղ ժո-
 ղովորէն զոյգութեան հարց է դրած, որի պատճառներ
 լուծման համար մենք պէտք է գոհնուք ման բան Իւ-
 քաղի բանաստեղծութեան ջատագովները Մեթիստոֆի
 ինքուստով զբաղմանում են տեսնելով երկու ազգերը բա-
 ժանող մեծ վիճը: Երբ վիճը երբեք չէ լցւել, չէ ուն-
 լանայ, մինչև որ գոյութիւն ունի ուս բանակալութիւ-
 նը: Թե՛ղ ուրեմն կորչի այդ բանաստեղծական և ժողովրդ,
 թե՛ղ ստապալի ցարի ու ժողովուրդի արիւնք ձեռք բիւ-
 րօղորտակայն հիմքը: Իւ երբ այդ աւերակները բեկոր-
 ներով կը լինեն մեր երկու թշնամի ժողովուրդներն բա-
 ժանող վիճը, այն ժամանակ իրաւունք կ'ունենանք սպա-
 սելու մշտական խաղաղութիւն, այն ժամանակ միայն
 կը հանգստանան բորբոքած մահաբեր կրքերը: . .

Շայքերը մէջ սկսեց մի նոր շարժում: Եւստի ան-
 սան, որ իրենց դէմ կանգնած է մի ներք թշնամի, որը
 գործում է և պատրաստում ցարի կառավարութեան
 լուսնայն համաձայնութեամբ, նոյնիսկ երբեմն նրա օ-
 ժանդակութեամբ ճեպան, որ իրենց գլխի ճարն իրենք
 են տեսնելու Կոնքի բարեկեցին ինքնապաշտպանութեան
 խմբեր, առաջ եկան յատուկ յանձնարարներ՝ ժողովու-
 րին զինելու, նրան զենքեր մատակարարելու նպատակով:
 Բուրժուական և սոսկալի շր մտայն Նւրբաբե-
 րութիւնները եղան նոյն նպատակով: . . յեղափոխական
 տեղական կոմիտեները լաւ ըմբռնելով իրենց պատաս-
 խանատու պարտաւորութիւնները, կազմեցին մարտական
 խմբեր, թուղեցիկ մասնախմբեր, ուղարկեցին բաւառ-
 ները մարզիկներ, որոնք կազմակերպում են գիւղացի-
 ներին, զենք բաժանում, չեղողութիւն անում և
 այլն: Երբ բոլորը շատ միութեամբ կան է: Եւստի գնե-
 այն, ինչ որ հետաւոր է, ինչ որ մեր ձեռքից գալիս
 է, թէև, թշնամութիւն ու զինաւորութիւնը աւաղ
 միշտ գերակշռելու է: . .

Ի հարկէ այն ժամանակամիջոցում, որ մենք ունեինք
 մեր արամադրութեան սակ, նոր ազգայնների ու կոտո-
 բանների հեռանկարներն աւրբիս, անհնարին էր գե-
 նել հայ ժողովուրդին և պատրաստել մի թշնամութեամբ
 որ ամբողջ տարիներով պատրաստել էր ու կազմակեր-
 պել զենքերը բաշխում: Մի կողմից ժամանակի սղու-
 թիւնն, իսկ միւս կողմից զենքի պակասութիւնը մեծ
 դժուարութիւն էր յարուցանում մեր նպատակների ի-
 իրագործման համար: Եւստի են այսօր ոչ միայն հայերն
 ու թիւրքերը, այլ ամբողջ Երևաստանի ժողովուրդը:
 Մտախառն յեղափոխութեան ուրախանք Երևաստա-

նում, ստիպում է բոլոր ազգութիւններին զինել ու
 նախապատրաստական միջոցներ ձեռք առնել իրենց ան-
 ձրն ու գոյքը պաշտպանելու ամեն տեսակ բաշխողութեան-
 րի ու սրիկաների դէմ, որոնք վերջերս այնքան յան-
 դուհն են դարձել Պարզ է, որ ամբողջ Երևաստանի
 շուկայում զգացում է զենքի պակասութիւն, իսկ ե-
 դանների գններն էլ շափազանց բարձրացել են, և վա-
 ճառում են կրկնակի, երբեմն իսկ եռակի գներով: Կա-
 ռավարութեան ձեռք առած միջոցները, անհնար հատ խու-
 զարկութիւնները նոյնպէս խանգարում են Երևաստա-
 նից զենք բերելու գործին: Թիւրքերը մեծ մասամբ զենք
 ձեռք են բերում իրենց կրօնակիցները միջոցով՝ Թիւր-
 քիայից ու Պարսկաստանից: Բայց և այնպէս հայ յե-
 դափոխական կազմակերպութիւնը ոչ մի ջանք, ոչ
 եռանդ չէր ինչպէս իր պարտականութիւնները ա-
 շխուրջ կերպով կատարելու և ժողովուրդի ինքնապաշտպա-
 նութեան գործը ամբողջ հիմքերի վրայ դնելու համար:

Իւ փաստերը յետագայում ցոյց տւին, թէ ինչ
 կը նշանակէ լաւ պատրաստել ու զինել ինքնապաշտ-
 պանութեան համար: Կախիլանի և Իրևանի զենքերը,
 որոնք հեռաւոր արձագանք էին Բազիկ զենքերի, պարզ
 ապացոյցներ են, թէ ինչ քաջագործութիւններ կարող են
 անել նոյնիսկ փոքրաթիւ յեղափոխականները, զենած
 խմբերը: Եւստի բոլոր տեղերում, ուր հայերը կազմակերպ-
 ւած էին, ուր ինքնապաշտպանութեան խմբեր էին կազմել,
 այնտեղ միշտ յաղթող էին և կամ շնչին մնաններ էին
 կրում ու սոսկալի դատեր էին տալիս թիւրքերին: Իսկ
 այն բոլոր տեղերը, ուր հայերը մեծ մեծներ են
 կրել, սպանութիւններն ու թալանի են թարկւել, զուրկ
 են եղել ինքնապաշտպանութեան միջոցներից:

Գ Ա Ն Ա Ա Վ Ի Ն Ա Յ Ա Ն Գ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի

Թիւրքերը ամենայն եռանդով զինւում են և այն՝
 փաշակարայ, օտարկանութեան զիտութեամբ: Արիւնքս
 իր ամբողջութեամբ թիւրքերի կողմն է: Մակայն, չը
 նայած մի բանի ազգաբարոյութիւններին՝ յարձակումը
 դժուար թէ շուտով սկսուի: Բայն նրանում է, որ թիւր-
 քերը համոզւել են, թէ իրենց արդի ուժերով դժուար
 կը յաջողեն գլուխ հանել հայերի դէմ: Եւստի տեղ
 նրանցից անհամեմատ աւելի մեծ թուով գոհներ են
 ընկնում:

Գաւառում՝ թիւրք յայտնի բեկերի մեծ (Բաճա-
 թուր բեկ, Արդեթեօզալով և օւրիշներ) համագումար
 ժողովներ են եղել, ուր, ստում, են ընդունւել է
 հեռանալ ծրագրերը: Հենց որ Գանձակի մէջ սկսել
 թիւրքական նախարարական, գաւառի թիւրքերը պէտք
 է շարժւել երկու ուղղութեամբ, — գէպի Ըսալի և գե-
 պի Գանձակ, աւերելով ճանապարհին բոլոր հայ գիւ-
 ղերը: Թիւրքական կազմակերպութիւնը աճում է. նրանք
 կազմում են ձիաւոր խմբեր, կամաւորներ են հրաւի-
 րում հեռաւոր տեղերից, որանցից աճին մեկին ասլիս
 են ձի, զենք, 50 ուսուցիչ փող և թալանի մի մասը:
 Շարունակում են միաժամանակ պրօպագանդ անել
 օրինակների մէջ, — մինչև օրս, բարեբախտաբար, ապար-
 դիւն:

Գններալ Յակոբ Վիլիսն դուրս եկաւ Նախաշինի բրոյ

որդին. երևակայեցէք, թէ ինչ զգացումներ նա կարող է ունենալ հայերի նկատմամբ... Շարունակ գանգառում է հայերից, համարելով նրանց խռովութիւնների պատճառ: Թիւրքերի վայրագութիւններին այնքան են ընտելացել, որ դա համարում են մի շատ բնական երևոյթ: Ն ո Ր ու թ իւ Ն ը՝ հայերի դիմագրութիւնն է և տեղ-տեղ նրանց կատաղի նախայարձակը...

Շուշայ շրջանում ոստիկանական բարձր պաշտօնները Ցանայաշվիլին բաժանել է թիւրքերին, որոնցից մի քանիսը առաջնակարգ ավազակների հոչակ ունեն: Եւլախ-Շուշու ճանապարհի հսկողութիւնը յանձնուած է յայտնի ավազակ Աբբաս-բէկ Աբգիբովին: Ել ո՞վ սերտ կանի մենակ ճամբորդել արքունական ճանապարհով... Այնտեղ սպանեցին ի միջի այլոց մի գերմանացու և մի իտալիացիներ հայի, Ս. Գանջեցեանին:

Հայերը ակն ընդ ականով են վարում թիւրքերի հետ: Ուրիշ ճար չը մնաց: Թող անգործ պոռոտախօսները — հայ և օտար — մեղադրեն մեզ, թող նրանք ճշան ու աղաղակեն Գաշնակցութեան տաքտիկի, նրա զինուորների նեղսրտութեան ու անզթութեան առթիւ... Ո՞վ է նրանց ականջ դնողը այս սարսափելի տագնապի միջոցին:

Ասկեարանի նշանաւոր ճակատամարտից յետոյ, ուր վարանդի, Խաչենի ու Զիվանշիրի ուժերը, Համազասպի առաջնորդութեամբ փառաւոր դաս տւին 1000-ից աւելի ձիաւոր թիւրքերին, հայերը աւերել են և մի շարք թիւրք գիւղեր: Կ ու ս ա պ ա տ ու մ քիչ առաջ տեղի է ունեցել ընդհարում, ուր սպանել է 8 թիւրք: մերտք կորցրել են միայն մէկ ձի, ուսմբերով բարձաւծ:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

Ն Ա Ս Ա Կ Վ Ա Ս Պ Ո Ւ Ի Ր Ա Կ Ա Ն Ի Յ

Օգոստոս 28.

Հունձը սկսեց: Հունձ հայ գիւղացու և հունձ սաւաղատներին: Մէկը հնձում, կալում, կալում է իր արիւն քրտինք աշխատանքի արդիւնքը, միւսը շահագործում, տանում է այդ դառն, գիշեր-ցերեկայ տանջանքի պտուղը: Բոլոր յոյսերը խորտակուած են, ակնկալութիւնները ոչնչանում ու դարձեալ նոյն դատարկ փեթակը, նոյն բաղցածութիւնը... Ե՞րբ պիտի վերջանայ այս ճակատագրական թշուառութիւնը: Սե ու դառն մի կեանք, անսանկան մի դրութիւն, որ միշտ նոյնն է, միշտ շարունակելի. ո՞չ կեանքն է սպառուած, և ո՞չ թշուառութիւնն է պարպուած: Հօտերի պէս անձայն, անլեզու ու անիրաւունք՝ քըլում է նրան և կառավարութիւնը, և՛ քիւրդը, և՛ աղան, և՛ շէյխը և՛ ղոլամը: Ո՞ւմ խօսէ, ո՞ւմ բողոքէ. մէկը բան միւսը վայրագ — մէկը բան միւսը բարբարոս, մէկը թիկունք միւսին:

Ինչ՞ հայ ժողովուրդը գլխիկոր, հլու, անձայն անմուռնչ կերպով տանում է բոլոր զրկանքները, բոլոր վայրագութիւնները, որպէս մի մեքենայ, որը ինքն ևս չը հասկանալով իր արածը՝ կատարում ու տանում է ամեն պատահար: Երկաթէ՛ դիմացկունութիւն, որ երբէք չէ խորտակուած:

Հունձ է: Բայց ի՞նչ է շահում այդ հնձից հայ գիւղացին. կալի մէկ կողմ մտրակը ձեռին կանգ-

նած է կառավարութեան զաբթիան, միւս կողմը՝ ջուալի բերանը բացած՝ սպասում է քիւրդ սաւաղատները՝ աղալի ղոլամը: Ու կալում է նա, բայց հէնց նոյն րոպէին դատարկուած է կալի մէջ դիզած ցորենի ահագին շեղջը. և նա դարձեալ գլխիկոր ու բաղցած՝ դիմում է դէպի մութ խրճիթը:

Չմեռւայ համատարած սովը հարկադրեց հայ գիւղացուն, իր ընտանիքը սովամահ չանելու համար, դիմել հրէշաւոր սաւաղատին: Սաւաղը, որից թէև սարսուած է նա մինչև ոսկոռների ծուծը, բայց ստիպւած է առնել չը մեռնելու, չը ոչնչանալու, իր «ձեթկիկ ճօքերը» սովամահ չանելու համար. ու այժմ կրկնակի բախուած է իր տունը: Սաւաղատերի պայմանները դժոխային են. 10 դահեկան դրամի համար 1 արագի չափ հացահատիկ պէտք է տալ և վերջը, մի չափ հացին 2 չափ ևս աւելացնել. իսկ տոկոսին տոկոսը ևս հաշւելով, տւած մէկին ստանում են 4:

Երկրորդ ցաւը միւլթեզէմներն են, որոնք կառավարութիւնից դրամով գնում են գիւղերը, սրանք արդէն իրենց վայրագութեան չափն ու սահմանը կորցնում են: Բոլոր եկամուտների — նոյնիսկ ամենաչնչին բերքերի համար նշանակուած է տուրք: Ամեն պողատու ծառին — ծիրան, տանձ, խնձոր և այլն — նշանակուած է 20—30 դահեկան տուրք, այնքան՝ որքան բերք անգամ չի բերի այդ ծառը. այդ պատճառով գիւղացիք այդ ցաւից աղատելու համար, ստիպւած են կտրատել բոլոր պողատու ծառերը. Այժմ բոլոր հայ գիւղերը զուրկ են պողատու ծառերից: 20 մետրանոց պարտիզի համար նշանակուած է 30 դահեկան տուրք: Այդ է պատճառը, որ շատ տեղեր գիւղացիք հրաժարուած են նրանից: Զուրկ լինելով դրամից՝ հայ գիւղացիք ստիպւած են դիմել քիւրդ աղային, որը իւրաքանչիւր 10 լիրային 4 քիլէ ցորեն է պահանջում, որ ասել է թէ՛ երկու ամսւայ ընթացքում 100 լիրային տոկոս պիտի վճարէ 40 քիլէ ցորեն:

Երրորդ չարիքը՝ շէյխերի և աղաների ղուժբարան է, որով աշխատանքի այս հրատապ ժամանակին ամբողջ գիւղերին պարտաւոր են կացուցանում շաբաթներով աշխատել իրանց համար: Շէյխիդ-Ալիի հազարաւոր արտերը բաղուած են հայ գիւղացոց ձեռքով: Բացի այդ՝ նրան ունեցած 20 հազար ոչխարի համար խոտ, փարախ հայթհայթում են դարձեալ իր շրջապատի հայերը մշտապէս: Մէյիդ-Ալիի ղոլամները անցեալ օրեր, Եղեկիս գիւղը ղուժբարայ չը տալու համար յարձակուած ու թալանի են տանում գիւղի ոչխարների մի մասը: Անցեալները դարձեալ ողանցիկ գիւղացոց ղուժբարայ չը տալու համար, գիւղի ուսի վրայ հրացան են պարպում, բարբախտաբար չի առնում: Կարճկանը այժմ խաղաղացած է բաւականաչափ, որովհետև նոյն գաւառի յայտնի Մուսա-բէյը, 2 ամիս է հեռացած է գաւառից դէպի Շամլիբան, որպէս թէ Շէյխ-Մամէդ Սեգիխին տեսնելու:

Կաւալի յայտնի շէյխ Ռաշիդը այս տարի աւերեց նոյն գաւառի Կիրիջ գիւղը, այնտեղ շինելով ոչխարի գոմեր: Գիւղացոց անընդհատ բողոքները ոչ մի հետեւանք չունեցան: Գայմագամը թողատրեց սրբազան շէյխին մշտապէս մնալ այնտեղ: Այդ շէյխի լամուկը, որ Նարեկի խնդրոյ առթիւ բանդն էր, ազատ արձակեցաւ: Կը տեղեկանանք, որ գայմագամը այդ և այլ խնդիրներ

րի համար 200 լիրայ, կլանել շէյխից: Կիրիջցիք կամաց-կամաց սկսել են գաղթել գիւղից դէպի Վանայ շրջակայքը: Նոյն գաւառի շիւսէյին աղաքիւղը սկսել է իր սրիկայուծիւնները, իր հայագէտ զոլամներին նա ուղարկում է գիւղեր, որոնք երեխաներին շաքար և հաց տալով, զանազան փախստական մարդկանց մասին է հարցնում ու հաւաքած տեղեկութիւնները անմիջական կերպով հաղորդում կառավարութեան:

Կաւաշի ժողովուրդը այս տարի ո՛չ մի արտ չի տւել միւլթէզիմներին. բոլոր գիւղերի արտերը վերցրել են իրանք գիւղացիք. կուլի խանի բոլոր ջանքերը իզուր անցան և նա, ասում են, իր տունը տրամադիր է փոխել դէպի Վան: Գայմագամը այս տարի բաւական լարւած է կուլի խանի դէմ նրա երկու տղաները այժմ փախստական են եղած:



ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱՆՆԵՐԸ ԹԻԻՐԻՔԻՍՅՈՒՄ

Մեր ձեռքն ընկած մի նամակ¹⁾, որ գրւած է Թիւրքական բանտերից մէկի քաղաքական հայ բանտարկեալների կողմից, բաւական բնորոշում է այն դրութիւնը, որի մէջ գտնուում են հայ քաղաքական կայանաւորները, այլ և այն խտրութիւնը, որ կառավարութիւնը դնում է հայ և Թիւրք բանտարկեալների միջև: Այդ առիթով պատեհ ենք համարում մի քանի մանրամասներ առաջ բերել:

Ինչպէս կենտրոնական քաղաքների բանտերում գրտնուող, նոյնպէս և բոլոր բերդերը աքսորւած հայ բանտարկեալները մեծ մասամբ քաղաքական յանցաւորներ են. իսկ Թրքական «օրէնքով» քաղաքական յանցաւորների դատապարտութիւնը—լինի այն մէկ, թէ «հարկը ու մէկ» առասպելական տարով—միշտ բերդարգելութեան (գալէպէնտ) անունով է արւում, որը զգալիօրէն տարբերւում է հասարակ ոճրագործների դատապարտութիւնից, որ Թիւրքարտութիւն (քիւրէկ ճէզասը) է կոչւում:

Օրէնքը չէ թոյլատրում բերդարգելութեան դատապարտւածներին քաղաքային բանտերում հասարակ ոճրագործների հետ խառնել, այլ թելագրում է մի առանձին տեղ պահել, համեմատաբար աւելի մաքուր և աւելի լաւ պայմաններում: Օրէնքի այս տրամադրութիւնը հետեւանք է այն ընդհանուր հայեացքի, որ քաղաքական յանցաւորները լինելով կրթւած մարդիկ, սովորական, մանաւանդ Թրքական բանտերի կացութեանը չեն կարող դիմանալ: Իսկ բերդաքաղաքները շրջապատը յետոյ՝ նրանք ազատութիւն պիտի ստանան նոյն քաղաքի ներսում—պարիսպի շրջանից ոչ-դուրս—ապրել և մասնաւոր պարագմունքով իրենց ապրուստը հոգալ. և եթէ դժւար է այնտեղ գործ գտնել, կառավարութիւնը պարտաւոր է իւրաքանչիւրին օրական չորս դահեկան դրամ տալ. դրա հետ միասին ունէ քաղաքական յանցաւորի բերդաքաղաք արտերու դէպքում, եթէ նա թողել է իր ընտանիքը անտեսապէս անապահով վիճակի մէջ, կառավարութիւնը պարտաւորւում է որոշ նպաստով օգնել նրա ընտանիքին:

Սակայն, ինչպէս յայտնի է, Թիւրքիայում օրէնքները միայն գրւած են, և կեանքի մէջ ոչ մի գործադրութիւն չունեն: Այդ իսկ պատճառով հայ բանտարկեալները անհասարակ նպաստի վրայ յոյս դնել չեն կարող և նրանց միակ ձգտումը եղել է յարգել տալ օրէնքի այն

կէտերը, որոնք տրամադրում են ա) քաղաքական յանցաւորներին չխառնել սովորական ոճրագործների հետ և բ) բերդերում ազատ շրջել:

Թիւրք քաղաքական յանցաւորների նկատմամբ այս կէտերը իրագործւում են: Այս խտրութիւնից զատ՝ մի բան, որ աչքի է ընկնում, այդ այն է, որ հայ քաղաքական բանտարկեալներին չեն տրւում այնպիսի առանձնաշնորհումներ, որպիսիք վայելում են մահապատժաւորներին բողոքները միշտ անլսելի են մնում և նոյնիսկ շատ անգամ հակառակ հետեւանքների հասցնում, նրանց ունէ դիմումը, ուղղած պատրիարքին, կամ ունէ օտար հիւպատոսի՝ խիստ սուղ է նստում: Այդպիսի մի յանգանութեան համար հայ բանտարկեալները շղթայուում են օրերով, ամիսներով: Մինչդեռ նոյն բանտում գտնուող մահապատժաւոր մարդասպանները ազատ են, ուրիշ օղակ իսկ չեն կրում, այն ինչ օրէնքով նրանք միշտ շղթայակապ պիտի լինեն:

Խտրութեան այս փաստը երբեմն հայ և մահապատժաւոր տարրերի միջև թշնամութիւններ է յարուցանում, որոնք յաճախ վերջանում են կռիւներով: Տուժողը դարձեալ հայերն են. նրանք թէ ծեծւում են բազմաթիւ մահապատժաւոր բանտարկեալներից և թէ վերջը օրինական բռնութեան ընթացքում ևս՝ յանցաւորներ են ճանաչւում կողմնապահ պաշտօնեաների շնորհիւ:

Հայ բանտարկեալները մի տարածւած սովորութիւն ունին. այն է՝ ահագին զոհողութիւններով հաղորդել իրենց դառն վիճակը Պոլսի պատրիարքին, համոզւած, որ վերջինի մի ցանկութեամբ իրենց դրութիւնը կը փոխի: Անցնում են տարիներ, բայց նրանց դրութիւնը մնում է անփոփոխ—նրանք նորից են դիմում պատրիարքին և նորից պատժւում Թիւրք պաշտօնեաներից, և այսպէս անվերջ...

Պատրիարքարանի միջատութիւնը, այդպիսի երկրորդական խնդիրներում, պէտք է ասած, լաւ հետեւանքներ է ունենում: Կառավարութիւնը աշխատում է փոքրիկ հարցերում բաւականութիւն տալ պատրիարքին, մեծ և կարեւոր հարցերում մերժելով որոշմամբ: Իրժբախտաբար երկչոտ պատրիարքը յաճախ փոքրիկ դիմումներն էլ չի անում:

Յոյսը բանտարկեալի մեծ ընկերն է: Աշխարհի լոյսից զուրկ այդ կենդանի մեռածը խոնաւ ու մութ գերեզմանում իսկ չի թողնում իր միակ միւլթարութիւնը—յոյսը, նրան պահելով իբրև միակ անձնամթերի սեփականութիւն: Մինչև որ գտնէ տարիներով փնտրած իր ազատ կեանքը և կամ մինչև որ մահան վերջին կոչը սարսուռով փոխանայ լայլու նրա կենդանի շունչը՝ ընդ միշտ տանելով նրա այնչափ փայլալից ու ակնակալած «մեծ յոյսը»:

Յոյսը սրտում, աչքերը դէպի հեռուն ուղղած՝ նամակագիրները ողբում են իրենց դրութիւնը: Իսկ պատրիարքը—նրանց յուճոյ յենակէտը—շատ վաղուց է մոռացել հայ բանտարկեալի սև օրը: Նա Սուլթանի ժպիտն է վայելում:

ՅԱՐԻԶՄԻ ԴՆԻԵՐԸ ՊԱՐՍՎԱՍՏԱՆՈՒՄ

Թեհրան, 24 սեպտեմբերի
Բաւական ժամանակից ի վեր այստեղ հաստատուել է մի վրացի, որ ուղարկւած է Կովկասից շատ կասկածելի

1) Այս նամակն ամբողջութեամբ կը հրատարակեն յայտնի համարում:

